



**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
Պ Ա Շ Տ Ո Ն Ա Կ Ա Ն Տ Ե Ղ Ե Կ Ա Գ Ի Ր**

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՏԱՄՆՀԻՆԳԵՐՈՐԴ ՏԱՐԻ 03(367) «13» մարտի 2019թ.

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

	ՅՈԹԵՐՈՐԴ ԲԱԺԻՆ	
	ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ	
42	«Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2006 թվականի հունվարի 24-ի N 39 և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2007 թվականի հոկտեմբերի 29-ի N 451 որոշումներում փոփոխություններ կատարելու մասին» ԱՀ կառավարության N 122-Ն որոշումը	
43	«Արցախի Հանրապետության պետական բյուջեով նախատեսված դրամական միջոցները հասարակական կազմակերպություններին որպես դրամաշնորհ հատկացնելու կարգը, հասարակական կազմակերպություններին դրամաշնորհ հատկացնելու հարցերով խորհրդատվական հանձնաժողովի անհատական կազմը հաստատելու և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 26-ի թիվ 584 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» ԱՀ կառավարության N 129-Ն որոշումը	
44	«Արցախի Հանրապետության պետական բյուջեի միջոցների հաշվին իրականացվող «ընթացիկ նորոգման, բարեկարգման և կոմունալ տնտեսության գծով Արցախի Հանրապետության շրջանների կարողությունների զարգացման ծրագրի» իրականացման կարգը հաստատելու մասին» ԱՀ կառավարության N 130-Ն որոշումը	
45	«Արցախի Հանրապետության պետական հիմնարկների արտաբյուջետային միջոցների սպասարկման, հաշվառման և վերահսկողության կարգը հաստատելու ու Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2003 թվականի փետրվարի 3-ի N 31 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» ԱՀ կառավարության N 131-Ն որոշումը	
46	«Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2014 թվականի հունիսի 19-ի N 385-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ԱՀ կառավարության N 132-Ն որոշումը	
47	«Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2015 թվականի փետրվարի 12-ի N 49-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ԱՀ կառավարության N 137-Ն որոշումը	
48	«Բնակարանային հարցերի հասարակական հանձնաժողովի գործունեության կարգի օրինակելի ձևը հաստատելու մասին» ԱՀ կառավարության N 141-Ն որոշումը	

49	«Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2004 թվականի հուլիսի 30-ի N 274 որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» ԱՀ կառավարության N 142-Ն որոշումը	
50	«Սեզոնային զբաղվածության խթանման միջոցով գյուղացիական տնտեսությանն աջակցության տրամադրման կարգը հաստատելու մասին» ԱՀ կառավարության N 143-Ն որոշումը	
51	«Արցախի Հանրապետության 2019 թվականի պետական բյուջեում վերաբաշխում, Արցախի Հանրապետության կառավարության 2018 թվականի դեկտեմբերի 28-ի N 1135-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» ԱՀ կառավարության N 148-Ն որոշումը	
	ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ	
52	ԱՀ Գերագույն դատարանի քրեական նյութ ԸԲԴ 0001/06/19 որոշումը	
53	ԱՀ Գերագույն դատարանի քաղաքացիական գործ ԸԲԴ 1573/02/16 որոշումը	

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

6 մարտի 2019թ.

N 122-Ն

ք. Ստեփանակերտ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
2006 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 24-Ի N 39 ԵՎ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2007 ԹՎԱԿԱՆԻ
ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 29-Ի N 451 ՈՐՈՇՈՒՄՆԵՐՈՒՄ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿՍՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Իրավական ակտերի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 71-րդ հոդվածը և ղեկավարվելով Արցախի Հանրապետության Նախագահի 2017 թվականի սեպտեմբերի 25-ի ՆՀ-108-Ն հրամանագրով սահմանված կարգի 6-րդ և 92-րդ կետերով՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **ո ր ո շ ու մ է.**

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2006 թվականի հունվարի 24-ի «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության գյուղի և գյուղատնտեսության աջակցության հիմնադրամ հիմնադրելու մասին» N 39 որոշմամբ հաստատված.

1) թիվ 1 հավելվածի 26-րդ կետում «վեց» բառը փոխարինել «հինգ» բառով.

2) թիվ 2 հավելվածից հանել 4-րդ կետը:

2. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2007 թվականի հոկտեմբերի 29-ի ««Զարգացման արցախյան գործակալություն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը Արցախի ներդրումային հիմնադրամի վերակազմակերպելու և հիմնադրամի կանոնադրությունը հաստատելու մասին» N 451 որոշմամբ հաստատված.

1) թիվ 1 հավելվածի 26-րդ կետում «6» թիվը փոխարինել «5» թվով.

2) թիվ 2 հավելվածից հանել 4-րդ կետը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

«Հաստատում եմ»

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ՆԱԽԱՐԱՐ

Գ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

8 մարտի 2019թ.

N 129-Ն

ք. Ստեփանակերտ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵՈՎ ՆԱԽԱՏԵՄՎԱԾ
ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ
ՈՐՊԵՍ ԴՐԱՄԱՇՆՈՐՀ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ԿԱՐԳԸ, ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԴՐԱՄԱՇՆՈՐՀ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ
ՀԱՐՑԵՐՈՎ ԽՈՐՀՐԴԱՏՎԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՆՀԱՏԱԿԱՆ
ԿԱԶՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2005 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 26-Ի
ԹԻՎ 584 ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ելնելով Արցախի Հանրապետությունում քաղաքացիական հասարակության կայացման, հասարակական կազմակերպությունների դերի բարձրացման, նրանց գործունեության արդյունավետության ապահովման անհրաժեշտությունից և հասարակական կազմակերպությունների պետական ֆինանսական աջակցության գործընթացը կանոնակարգելու նպատակով, հիմք ընդունելով «Իրավական ակտերի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 73-րդ հոդվածը՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **ո ր ո շ ու մ է.**

1. Հաստատել Արցախի Հանրապետության պետական բյուջեով նախատեսված դրամական միջոցները հասարակական կազմակերպություններին որպես դրամաշնորհի հատկացնելու կարգը՝ համաձայն N 1 հավելվածի:

2. Ստեղծել հասարակական կազմակերպություններին դրամաշնորհի հատկացնելու հարցերով խորհրդատվական հանձնաժողով (այսուհետ՝ Հանձնաժողով) և հաստատել Հանձնաժողովի անհատական կազմը՝ համաձայն N 2 հավելվածի:

3. Ուժը կորցրած ճանաչել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 26-ի «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պետական բյուջեից հատկացված դրամական միջոցները հասարակական կազմակերպություններին որպես դրամաշնորհներ հատկացնելու կարգը հաստատելու մասին» թիվ 584 որոշումը:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

«Հաստատում եմ»

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ

Բ. ՄԱՀԱԿՅԱՆ

Կ Ա Ր Գ

**ԱՐՑԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵՈՎ ՆԱԽՏԵՍՎԱԾ
ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ ՀԱՄԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ
ՈՐՊԵՍ ԴՐԱՄԱՇՆՈՐՀ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ**

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգով կարգավորվում են Արցախի Հանրապետության պետական բյուջեի համապատասխան ծրագրով նախատեսված դրամական միջոցներն Արցախի Հանրապետությունում գրանցված հասարակական կազմակերպություններին որպես դրամաշնորհներ հատկացնելու հետ կապված հարաբերությունները:

2. Սույն կարգի իմաստով՝ դրամաշնորհը հասարակական կազմակերպության գործունեության խթանման և կանոնադրական խնդիրների իրականացման նպատակով պետական բյուջեից անհատույց և անվերադարձ տրամադրվող դրամական միջոց է:

3. Հասարակական կազմակերպություններին դրամաշնորհներ հատկացվում են՝

1) քաղաքացիական հասարակության ինստիտուտների կայացման, ժողովրդավարության խորացման.

2) հասարակական կազմակերպությունների ներուժի դրսևորման և օգտագործման.

3) մարդու և քաղաքացու իրավունքների և ազատությունների իրականացմանն աջակցելու.

4) հասարակության կրթական, մշակութային և կրոնական դաստիարակությանն աջակցելու.

5) հասարակական կարծիքի ուսումնասիրման և վերլուծության.

6) հասարակության իրազեկման, հրատապ հիմնահարցերին ուշադրություն հրավիրելու.

7) քաղաքացիների իրավագիտակցության և իրավական կուլտուրայի աստիճանի բարձրացման.

8) որոշակի խնդիրների լուծման տարբերակների մշակման և հիմնավորված առաջարկությունների կատարման.

9) պետական և տեղական ինքնակառավարման մարմինների գործառույթների իրականացմանն աջակցելու.

10) կարևոր հիմնահարցերին հասարակական հնչեղություն հաղորդելու նպատակով:

4. Հասարակական կազմակերպություններին պետական բյուջեի միջոցների հաշվին դրամաշնորհներ հատկացվում են Արցախի Հանրապետության կառավարության որոշմամբ՝ հասարակական կազմակերպություններին դրամաշնորհ հատկացնելու հարցերով խորհրդատվական հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) առաջարկության հիման վրա:

5. Հասարակական կազմակերպություններին պետական բյուջեի միջոցների հաշվին հատկացվող դրամաշնորհների առավելագույն գումարը հինգ միլիոն ՀՀ դրամ է: Եզակի դեպքերում հատկացվող դրամաշնորհի առավելագույն գումարի չափը կարող է ավել լինել, քան սույն կետում նշված չափը: Արցախի Հանրապետության պետական բյուջեից չֆինանսավորված և առաջին անգամ դրամաշնորհ ստանալու նպատակով հայտ ներկայացրած հասարակական կազմակերպությանը հատկացվող դրամաշնորհի առավելագույն գումարը մեկ միլիոն դրամ է:

2. ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ՀԱՏԿԱՑՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ

6. Դրամաշնորհ ստանալու նպատակով հասարակական կազմակերպության ղեկավարը հայտ (դիմում) է ներկայացնում Հանձնաժողովին:

7. Հայտին կից ներկայացվում են.

1) դրամաշնորհային ծրագիր (նաև էլեկտրոնային կրիչով).

2) հասարակական կազմակերպության կանոնադրության և հասարակական կազմակերպության գրանցման փաստը հավաստող պետական միասնական գրանցամատյանից քաղվածքի պատճեններ.

3) տեղեկություններ վերջին մեկ տարվա ընթացքում հասարակական կազմակերպության կողմից կազմակերպված միջոցառումների մասին:

4) հասարակական կազմակերպության վերջին մեկ տարվա գործունեության ֆինանսական հաշվետվություն:

5) տեղեկություններ հասարակական կազմակերպության անդամների թվի և տարածքային ստորաբաժանումների մասին:

8. Հասարակական կազմակերպությունները հայտերը ներկայացնում են մինչև ընթացիկ բյուջետային տարվա մարտի 1-ը (2019 թվականին՝ մինչև մարտի 20-ը):

9. Հանձնաժողովը կարող է քննարկել նաև դրամաշնորհ ստանալու նպատակով հասարակական կազմակերպության ղեկավարի՝ այլ պետական մարմիններին ուղղված և Հանձնաժողովին վերահասցեագրված հայտերը (դիմումները):

10. Հանձնաժողովը ներկայացված հայտը քննարկում և Արցախի Հանրապետության կառավարությանը համապատասխան առաջարկություն է ներկայացնում հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալուց հետո մեկամսյա ժամկետում:

11. Հայտի քննարկման ժամանակ հաշվի են առնվում հետևյալ հանգամանքները.

1) հայտի համապատասխանությունը սույն կարգի պահանջներին.

2) դրամաշնորհային ծրագրի իրականացման անհրաժեշտությունը.

3) դրամաշնորհային ծրագրի իրատեսությունը.

4) դրամաշնորհային ծրագրի արդյունավետությունը.

5) դրամաշնորհային ծրագրի իրականացման նպատակով ֆինանսական այլ միջոցների ներգրավման առկայությունը.

6) դրամաշնորհային ծրագրի բյուջեի կազմման ռացիոնալությունը.

7) հասարակական կազմակերպության հարկային և ֆինանսական կարգապահությունը.

8) ուշադրության արժանի այլ հանգամանքներ:

12. Անհրաժեշտության դեպքում Հանձնաժողովի նիստին հրավիրվում են մասնագետներ, հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ, հայտնի հասարակական, քաղաքական, գիտական, մշակութային և այլ գործիչներ՝ ներկայացված ծրագրերի վերաբերյալ կարծիք ստանալու նպատակով: Հայտի քննարկման ժամանակ Հանձնաժողովի նիստին կարող է հրավիրվել նաև հասարակական կազմակերպության լիազորված ներկայացուցիչը:

13. Հանձնաժողովը կարող է դրամաշնորհային ծրագրի վերաբերյալ հանդես գալ դիտողություններով ու առաջարկություններով: Հանձնաժողովի դիտողություններն ու առաջարկությունները ներկայացվում են հայտատուին՝ դրամաշնորհային ծրագրում փոփոխություններ կատարելու համար:

14. Քննարկման արդյունքների հիման վրա Հանձնաժողովը որոշում է հասարակական կազմակերպությանը դրամաշնորհի տրամադրման նպատակահարմարությունն ու դրամաշնորհի չափը և համապատասխան առաջարկություն ներկայացնում Արցախի Հանրապետության կառավարությանը:

15. Արցախի Հանրապետության կառավարության որոշման ընդունումից հետո դրամաշնորհ ստացած հասարակական կազմակերպության և Արցախի Հանրապետության միջև հարաբերությունները կարգավորվում են Արցախի Հանրապետության օրենսդրությամբ:

3. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

16. Հանձնաժողովն իր գործունեությունն իրականացնում է նիստերի միջոցով, կոլեգիալության սկզբունքով:

17. Հանձնաժողովն ընդունում է արձանագրային որոշումներ:

18. Հանձնաժողովի նիստն իրավագոր է Հանձնաժողովի անդամների կեսից ավելիի մասնակցության դեպքում:

19. Հանձնաժողովի որոշումներն ընդունվում են նիստին ներկա անդամների քվեարկության արդյունքում՝ ձայների պարզ մեծամասնությամբ: Ձայների հավասարության դեպքում Հանձնաժողովի նախագահի ձայնը վճռորոշ է: Հանձնաժողովի յուրաքանչյուր անդամ ունի մեկ ձայնի իրավունք, քվեարկում է կողմ կամ դեմ:

20. Հանձնաժողովի նիստերն արձանագրվում են: Նիստի արձանագրությունը ստորագրում է նիստը վարողը:

21. Հանձնաժողովի նախագահը՝

- 1) ղեկավարում է Հանձնաժողովի աշխատանքները.
 - 2) հրավիրում և վարում է Հանձնաժողովի նիստերը.
 - 3) մասնակցում է հայտերի քննարկմանը և քվեարկությանը, ներկայացնում հայտերի վերաբերյալ առաջարկություններ և դիտողություններ.
 - 4) իրականացնում է սույն կարգով իր իրավասությանը վերապահված այլ լիազորություններ:
22. Հանձնաժողովի անդամը՝
- 1) վարում է նիստերը Հանձնաժողովի նախագահի հանձնարարությամբ.
 - 2) մասնակցում է հայտերի քննարկմանը և քվեարկությանը, ներկայացնում հայտերի վերաբերյալ առաջարկություններ և դիտողություններ.
 - 3) ծանոթանում է նիստերի արձանագրություններին.
 - 4) իրականացնում է սույն կարգով իր իրավասությանը վերապահված այլ լիազորություններ:
23. Հանձնաժողովի պատասխանատու քարտուղարը՝
- 1) արձանագրում է հանձնաժողովի նիստերը.
 - 2) ապահովում է կապը հանձնաժողովի անդամների միջև.
 - 3) իրականացնում է սույն կարգով իր իրավասությանը վերապահված այլ լիազորություններ:
24. Հանձնաժողովը գործում է հասարակական հիմունքներով:
25. Հանձնաժողովի գործունեության կազմակերպական ու նյութատեխնիկական ապահովումն իրականացնում է Արցախի Հանրապետության Նախագահի աշխատակազմի կառավարության գործերի կառավարչությունը:

**ԱՐՑԱՒԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՉՈՒԹՅԱՆ
ՊԵՏ-ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ** **Ա. ԼԱԶԱՐՅԱՆ**

ԱՆՀԱՏԱԿԱՆ ԿԱԶՄ
ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄՍԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԴՐԱՄԱՇՆՈՐՀ
ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՀԱՐՑԵՐՈՎ ԽՈՐՀՐԴՏՎԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

- | | |
|---------------------------|---|
| 1. Արայիկ Լազարյան | Արցախի Հանրապետության Նախագահի աշխատակազմի կառավարության գործերի կառավարչության պետ-աշխատակազմի ղեկավարի առաջին տեղակալ (հանձնաժողովի նախագահ) |
| 2. Վարուժան Առաքելյան | Արցախի Հանրապետության Նախագահի աշխատակազմի կառավարչության գործերի կառավարչության կազմակերպական բաժնի վարիչ (պատասխանատու քարտուղար) |
| 3. Կարեն Դանիելյան | Արցախի Հանրապետության Նախագահի աշխատակազմի ղեկավարի տեղակալ-պետախրավական վարչության պետ |
| 4. Արարատ Դանիելյան | Արցախի Հանրապետության Նախագահի աշխատակազմի կառավարչության գործերի կառավարչության պետի տեղակալ |
| 5. Սուսաննա Աբրահամյան | Արցախի Հանրապետության պետական նախարարի աշխատակազմի սոցիալ-տնտեսական վարչության պետ |
| 6. Ռամելա Դադայան | Արցախի Հանրապետության Ազգային ժողովի սոցիալական և առողջապահության հարցերի մշտական հանձնաժողովի նախագահի տեղակալ (համաձայնությամբ) |
| 7. Վարդգես Բաղդյան | Արցախի Հանրապետության Ազգային ժողովի գիտության, կրթության, մշակույթի, երիտասարդության և սպորտի հարցերի մշտական հանձնաժողովի անդամ (համաձայնությամբ) |
| 8. Նորայր Ավանեսյան | Արցախի Հանրապետության ֆինանսների նախարարի տեղակալ |
| 9. Գայանե Գրիգորյան | Արցախի Հանրապետության մշակույթի, երիտասարդության հարցերի և զբոսաշրջության նախարարի տեղակալ |
| 10. Միքայել Համբարձումյան | Արցախի Հանրապետության կրթության, գիտության և սպորտի նախարարի տեղակալ |
| 11. Ռուզաննա Սարգսյան | Արցախի Հանրապետության աշխատանքի, սոցիալական հարցերի և վերաբնակեցման նախարարի տեղակալ |
| 12. Կամո Քոչարյան | Արցախի Հանրապետության արդարադատության նախարարության աշխատակազմի ղեկավար |

ԱՐՑԱՒԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՉՈՒԹՅԱՆ
ՊԵՏ-ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ **Ա. ԼԱԶԱՐՅԱՆ**

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

11 մարտի 2019թ.

N 130-Ն

ք. Ստեփանակերտ

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀԱՇՎԻՆ
ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ԸՆԹԱՑԻԿ ՆՈՐՈԳՄԱՆ, ԲԱՐԵԿԱՐԳՄԱՆ ԵՎ
ԿՈՄՈՒՆԱԼ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԳԾՈՎ ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇՐՋԱՆՆԵՐԻ ԿԱՐԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ»
ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով «Իրավական ակտերի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածը՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **ա ղ ղ ղ ղ ղ** է:

1. Հաստատել Արցախի Հանրապետության պետական բյուջեի միջոցների հաշվին իրականացվող «Ընթացիկ նորոգման, բարեկարգման և կոմունալ տնտեսության գծով Արցախի Հանրապետության շրջանների կարողությունների զարգացման ծրագրի» իրականացման կարգը՝ համաձայն հավելվածի:

2. Շրջանների վարչակազմերի ղեկավարներին՝ սույն կարգն ուժի մեջ մտնելուց հետո եռամսյա ժամկետում խմելու ջրի մատակարարման ծառայության սակագներն օրենսդրությամբ սահմանված կարգով ներկայացնել սահմանման:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

«Հաստատում եմ»

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ**

Բ. ՄԱՀԱԿՅԱՆ

ԿԱՐԳ

**ԱՐՑԱՒԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀԱՇՎԻՆ
ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ԸՆԹԱՑԻԿ ԼՈՐՈՂՄԱՆ, ԲԱՐԵԿԱՐԳՄԱՆ ԵՎ ԿՈՍՈՒՆԱԼ
ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԳԾՈՎ ԱՐՑԱՒԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆՆԵՐԻ
ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ» ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ**

1. Մույն կարգով կարգավորվում են Արցախի Հանրապետության պետական բյուջեի միջոցների հաշվին իրականացվող «Ընթացիկ նորոգման, բարեկարգման և կոմունալ տնտեսության գծով Արցախի Հանրապետության շրջանների կարողությունների զարգացման ծրագրով» նախատեսված հետևյալ ենթածրագրերի իրականացման հետ կապված հարաբերությունները.

- 1) ավտոճանապարհների պահպանում և շահագործում.
- 2) գյուղերի ճանապարհների սալապատում.
- 3) շրջանի համայնքներին, բնակիչներին շինանյութերի տրամադրում.
- 4) սանիտարական մաքրում.
- 5) կանաչապատում.
- 6) բարեկարգում.
- 7) ջրամատակարարման համակարգերի պահպանում և շահագործում:

2. Ավտոճանապարհների պահպանման և շահագործման ենթածրագիրն իրականացվում է «Ավտոմոբիլային ճանապարհների մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի պահանջներին համապատասխան: Ենթածրագրով նախատեսված աշխատանքների իրականացումն ընդգրկում է շրջանային (տեղական) նշանակության ճանապարհները և փողոցները: Ենթածրագրի իրականացումը նպատակ ունի ապահովել ճանապարհահատվածներին տրանսպորտի շուրջօրյա և անվտանգ երթևեկությունը՝ համաձայն ճանապարհների պահպանման կանոնների, ինչպես նաև ավտոճանապարհների ճանապարհային կահավորանքի, այդ թվում՝ նաև արգելափակյալների վնասման դեպքերի հաշվառումը և ճանապարհային կահավորանքին պատճառված վնասների վերականգնումը: Ենթածրագրով նախատեսված աշխատանքներն իրականացվում են հետևյալ պահանջների պահպանմամբ.

1) աշխատանքների կատարումը, կատարված աշխատանքների ընդունումը և դրանց դիմաց վճարումն իրականացվում է քաղաքաշինության բնագավառի օրենսդրությանը համապատասխան.

2) կատարված աշխատանքների ընդունումն իրականացվում է շրջանի վարչակազմի կողմից՝ համայնքի ղեկավարի գրավոր համաձայնությամբ.

3) քաղաքաշինության բնագավառի լիազոր մարմնի կողմից սահմանված կարգով իրականացվում է վերահսկողություն:

3. Գյուղերի ճանապարհների սալապատման ենթածրագիրն իրականացվում է գյուղական (համայնքային) նշանակության ճանապարհահատվածներում: Ենթածրագրով նախատեսված աշխատանքներն իրականացվում են հետևյալ պահանջների պահպանմամբ.

1) սալապատման համար անհրաժեշտ շինանյութը և տեղադրման աշխատանքները ձեռք են բերվում՝ հաշվի առնելով, որ սալապատման ընդհանուր հաշվարկում ներառված տեղադրման աշխատանքների արժեքը՝ 1 քառակուսի մետրի դիմաց կազմում է առավելագույնը 1 500 ՀՀ դրամ, իսկ սալապատման համար անհրաժեշտ շինանյութի առավելագույն արժեքը չպետք է գերազանցի շինարարության բնագավառում լիազոր մարմնի կողմից հրապարակվող ինֆորմացիոն տեղեկագրով նախատեսված առավելագույն գինը.

2) կատարված աշխատանքների ընդունումն իրականացվում է շրջանի վարչակազմի կողմից՝ համայնքի ղեկավարի գրավոր համաձայնությամբ:

4. Շրջանի համայնքներին, բնակիչներին շինանյութերի տրամադրման ենթածրագրի իրականացման նպատակով շրջանի վարչակազմի ղեկավարի կողմից ստեղծվում է հանձնաժողով, որը խորհրդակցելով համայնքի ղեկավարի հետ, գնահատում է շինանյութի տրամադրման հայտը՝ հաշվի առնելով հայտ ներկայացնողի (այսուհետ՝ շահառու) բնակարանային ոչ բավարար պայմանները և սոցիալական

կարգավիճակը: Ենթաձրագրով նախատեսված աշխատանքներն իրականացվում են հետևյալ պահանջների պահպանմամբ.

1) մեկ շաբաթուրդի շինանյութը կարող է տրամադրվել ոչ հաճախ, քան երկու տարին մեկ անգամ.

2) մեկ շաբաթուրդի տրամադրվող շինանյութի արժեքը չի կարող գերազանցել 1 000 000 (մեկ միլիոն) ՀՀ դրամը.

3) շինանյութը տրամադրվում է բացառապես շաբաթուրդի բնակարանային պայմանների բարելավման նպատակով.

4) տրամադրված շինանյութը երեք ամսվա ընթացքում չօգտագործելու կամ ոչ նպատակային օգտագործման դեպքում շաբաթուրդի պարտավոր է վերադարձնել շինանյութը կամ շինանյութի արժեքը.

5) սույն կետի պահանջները չեն տարածվում համայնքի կարիքների համար տրամադրվող և ընդհանուր օգտագործման համար նախատեսված շինանյութերի վրա:

5. Մանիտարական մաքրման ենթաձրագրի շրջանակներում աշխատանքները կարող են իրականացվել «Ադրահանության և սանիտարական մաքրման մասին» Արցախի Հանրապետության օրենքով սահմանված պահանջներին համապատասխան՝ օրենքով նախատեսված դրույքաչափերի սահմաններում:

6. Կանաչապատման ենթաձրագրի շրջանակներում աշխատանքները կարող են իրականացվել միայն շրջանի քաղաքային բնակավայրերում՝ վարչական և բազմաբնակարան շենքերի հարակից տարածքներում և հասարակական վայրերում:

7. Բարեկարգման ենթաձրագրի շրջանակներում աշխատանքները կարող են իրականացվել վարչական և բազմաբնակարան շենքերում, դրանց հարակից տարածքներում և հասարակական վայրերում: Ենթաձրագրով նախատեսված աշխատանքների կատարումը և կատարված աշխատանքների ընդունումն իրականացվում է քաղաքաշինության բնագավառի օրենսդրությանը համապատասխան:

8. Ջրամատակարարման համակարգերի պահպանման և շահագործման ենթաձրագրին իրականացվում է համայնքների (բնակավայրերի) ջրամատակարարման համակարգերի բնականոն գործունեությունն ապահովելու նպատակով: Ջրամատակարարման համակարգի շինարարության ավարտից հետո, այն կարող է շահագործման նպատակով հանձնվել շրջանի վարչակազմի ենթակայությամբ գործող կազմակերպությանը կամ համայնքին, որը կրում է տվյալ համակարգի հետագա պահպանման և սպասարկման պարտավորությունները՝ հավաքագրվող միջոցների հաշվին: Ջրի մատակարարման սակագնի որոշ մասը կարող է սուբսիդավորվել շրջանի վարչակազմի կողմից՝ Արցախի Հանրապետության ֆինանսների բնագավառում լիազորված պետական մարմնի համաձայնությամբ: Ջրամատակարարման սակագները հաստատվում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ջրային օրենսգրքով սահմանված կարգով:

9. Սահմանել, որ սույն կարգի 4-րդ կետի 1-ին և 2-րդ ենթակետերով սահմանված պահանջները չեն տարածվում բնածին և (կամ) տեխնածին աղետների հետևանքով առաջացած իրավիճակների վրա:

10. Սույն կարգով նախատեսված ենթաձրագրերի իրականացման շրջանակներում ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերումն իրականացվում է «Գնումների մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքով սահմանված կարգով:

11. Շրջանի վարչակազմի ղեկավարը՝ Արցախի Հանրապետության ֆինանսների բնագավառում լիազորված պետական մարմնի համաձայնությամբ, կարող է կատարել սույն ձրագրի գծով շրջանին տրված հատկացումների ընդհանուր գումարի 15 տոկոս չափաքանակը չգերազանցող ներքին վերաբաշխումներ՝ եթե տվյալ տարվա պետական բյուջեի մասին օրենքով այլ բան նախատեսված չէ:

ԱՐՑԱՒԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ

ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՉՈՒԹՅԱՆ

ՊԵՏ-ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ

Ա. ԼԱԶԱՐՅԱՆ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

11 մարտի 2019թ.

N 131-Ն

ք. Ստեփանակերտ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐԻ
ԱՐՏԱԲՅՈՒՋԵՏԱՑԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ, ՀԱՇՎԱՌՄԱՆ ԵՎ
ՎԵՐԱՀՄԿՈՂՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՈՒ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2003 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 3-Ի
N 31 ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒՇԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Իրավական ակտերի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 13-րդ, 73-րդ հոդվածները և «Արցախի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածը՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **նրռռռռռ** է:

1. Հաստատել Արցախի Հանրապետության պետական հիմնարկների արտաբյուջետային միջոցների սպասարկման, հաշվառման և վերահսկողության կարգը՝ համաձայն հավելվածի:

2. «Արցախի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 9-րդ և 9¹-րդ մասերի և Արցախի Հանրապետության օրենսդրության համաձայն՝ Արցախի Հանրապետության կառավարության թույլտվությամբ, պետական հիմնարկների կողմից գանձապետարանում կամ որևէ բանկում բացված արտաբյուջետային հաշիվներում գոյացող ֆինանսական միջոցների սպասարկումը, հաշվառումը և վերահսկողությունն իրականացվում է սույն որոշման 1-ին կետով հաստատված կարգին համապատասխան:

3. Ուժը կորցրած ճանաչել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2003 թվականի փետրվարի 3-ի «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության բյուջետային հիմնարկների արտաբյուջետային միջոցների սպասարկման, հաշվառման և վերահսկողության կարգը հաստատելու մասին» N 31 որոշումը:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից, իսկ դրա գործողությունը տարածվում է 2019 թվականի հունվարի 1-ից հետո ծագած հարաբերությունների վրա:

«Հաստատում եմ»

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ

Բ. ՄԱՀԱԿՅԱՆ

Կ Ա Ր Գ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐԻ ԱՐՏԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ, ՀԱՇՎԱՌՄԱՆ ԵՎ ՎԵՐԱՀԱՄԱՐՈՒԹՅԱՆ

1. Սույն կարգը սահմանում է Արցախի Հանրապետության պետական հիմնարկների արտաբյուջետային միջոցների սպասարկման, հաշվառման և վերահսկողության գործընթացը:

2. Արցախի Հանրապետության պետական հիմնարկների արտաբյուջետային միջոցները ներառում են՝

1) պետական հիմնարկներին ոչ պետական աղբյուրներից տրամադրված՝ անվերադարձ և չփոխհատուցվող արտաբյուջետային ֆինանսական միջոցները:

2) պետական հիմնարկների կողմից Արցախի Հանրապետության օրենսդրությամբ վերապահված գործառնությունների իրականացումից մուտքագրվող ֆինանսական միջոցները, ինչպես նաև սահմանված դեպքերում և կարգով ապրանքների մատակարարման, ծառայությունների մատուցման ու աշխատանքների կատարման դիմաց վճարվող ոչ բյուջետային ֆինանսական միջոցները:

3. Արցախի Հանրապետության պետական հիմնարկների արտաբյուջետային միջոցները մուտքագրվում են գանձապետական միասնական հաշվի արտաբյուջետային միջոցների ենթահաշիվներին և բանկային համակարգում բացված արտաբյուջետային հաշիվներին:

4. Արցախի Հանրապետության նախարարությունների և պետական կառավարման այլ մարմինների, գերատեսչությունների և տարածքային կառավարման մարմինների արտաբյուջետային միջոցների (բացառությամբ դատական, իրավապահ և դատական ակտերի հարկադիր կատարման մարմինների դեպոզիտային, իրավաբանական անձանց սպասարկման նպատակով պետական հիմնարկների համար բացված, ինչպես նաև Արցախի Հանրապետության ֆինանսների նախարարության համար բացված դեպոզիտային (արտարժույթային) հաշիվներ) նախահաշիվները և գնումների պլանը հաստատվում են Արցախի Հանրապետության կառավարության կողմից: Նախահաշիվների ցուցանիշներն օրենքով սահմանված կարգով ներառվում են տվյալ տարվա պետական բյուջեում: Հաստատված նախահաշիվներով սահմանված հատկացումների ցուցանիշների միջև ներքին հոդվածային վերաբաշխումները և գնումների պլանում փոփոխություններն իրակա-նացվում են բյուջետային օրենսդրությամբ սահմանված կարգով: Գանձապետական միասնական հաշվի արտաբյուջետային միջոցների ենթահաշիվներում և բանկային համակարգում բացված արտաբյուջետային հաշիվներում կուտակվող միջոցները կարող են տնօրինվել, եթե դրանց նախահաշիվը, որի ձևը սահմանվում է Արցախի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից, հաստատված է տվյալ հիմնարկի վերադաս մարմնի կողմից:

5. Գանձապետարանում պետական հիմնարկների արտաբյուջետային միջոցների սպասարկումը և հաշվառումը յուրաքանչյուր հիմնարկի համար կատարվում է առանձին:

6. Պետական հիմնարկի կողմից արտաբյուջետային հաշիվներից գումարների ստացումը կատարվում է Արցախի Հանրապետության պետական բյուջեի դրամարկ-դային կատարման սահմանված ընթացակարգով, եթե ապահովված է սույն կարգի 4-րդ կետի պահանջը:

7. Պետական հիմնարկը պետական բյուջեի ծախսերի կատարման եռամսյակային հաշվետվության հետ Արցախի Հանրապետության ֆինանսների նախարարություն է ներկայացնում արտաբյուջետային միջոցների գոյացման և տնօրինման վերաբերյալ եռամսյակային հաշվետվությունը՝ Արցախի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից հաստատված օրինակելի ձևին համապատասխան:

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ

ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՉՈՒԹՅԱՆ

ՊԵՏ-ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ

Ա. ԼԱԶԱՐՅԱՆ

ԱՐՑԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

11 մարտի 2019թ.

N 132-Ն

ք. Ստեփանակերտ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
2014 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 19-Ի N 385-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ
ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Իրավական ակտերի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 71-րդ հոդվածը՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **ոքոշում է**.

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2014 թվականի հունիսի 19-ի «Պաշտոնային դրույքաչափերի հաշվարկման գործակիցները սահմանելու, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2007 թվականի դեկտեմբերի 25-ի N 709 և 2009 թվականի հունվարի 29-ի N 33-Ն որոշումներն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 385-Ն որոշման մեջ կատարել հետևյալ լրացումները և փոփոխությունները.

1) որոշման 1-ին կետի 1-ին ենթակետով սահմանված N 1 հավելվածում «ԱՀ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ» բաժնում լրացնել հետևյալ բովանդակությամբ «26.1-ին» տող.

« 26.1	Կապիտալ շինարարության վարչության առաջին կարգի մասնագետ-տեխնիկիչ	2,50	».
--------	---	------	----

2) որոշման 1-ին կետի 2-րդ ենթակետով սահմանված N 2 հավելվածում «Ծառայողական ավտոմեքենայի վարորդ» տողից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ «1.1-ին» տող.

« 1.1	Կենտրոնական պահեստի պահեստապետ	1,50	».
-------	--------------------------------	------	----

3) որոշման 1-ին կետի 4-րդ ենթակետով սահմանված N 4 հավելվածում կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները.

ա. ««ԱՀ առողջապահության նախարարության պետական հիգիենիկ և հակահամաճարակային տեսչության համաճարակաբանության և հիգիենայի կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպություն», ««Դատաբժշկական փորձաքննության բյուրո» պետական ոչ առևտրային կազմակերպություն» և «Առողջապահության համակարգում ամբուլատոր պոլիկլինիկական ծառայություններ մատուցող հիմնարկների բուժաշխատողներ» բաժինները շարադրել հետևյալ խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի,

բ. ««Ստեփանակերտի տուն-ինտերնատ» պետական ոչ առևտրային կազմակերպություն» բաժնում «Տնօրեն» տողից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր տող.

«	Տնօրենի տեղակալ	2.60	».
---	-----------------	------	----

գ. «ԱՀ աշխատանքի, սոցիալական հարցերի և վերաբնակեցման նախարարության կենտրոնական պահեստ» բաժինը հանել,

դ. ««Արցախանտառ» պետական ոչ առևտրային կազմակերպություն» բաժնում՝ «Գլխավոր հաշվապահ» բառերից հետո լրացնել «, տնտեսագիտական

բաժնի պետ, անտառաշինության գծով քարտեզավորման բաժնի պետ» բառերը, «Գլխավոր անտառապետ» բառերից հետո լրացնել «, գլխավոր անտառագետ» բառերը, «Անտառների վերարտադրման և օգտագործման վերահսկողության բաժնի պետ» բառերից հետո լրացնել «, արտադրության պետ միջերման գծով» բառերը, «Հաշվետար, անտառապետ» բառերից հետո լրացնել «, առաջին կարգի մասնագետ» բառերը,

ե. ««Արցախանտառ» պետական ոչ առևտրային կազմակերպություն» բաժնից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր բաժին.

«	«Կանաչ Արցախ» կենսոլորտային համալիր» պետական ոչ առևտրային կազմակերպություն	
	Տնօրեն	3.30
	Գլխավոր հաշվապահ	2.43
	Արգելոցի վարիչ, արգելավայրի վարիչ, ազգային պարկի վարիչ	2.27
	Գլխավոր մասնագետ, էկոտուրիզմի մասնագետ	1.80
	Վարորդ	1.25
»:		

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

«Հաստատում եմ»

**ԱՐՅԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ**

Բ. ՍԱՀԱԿՅԱՆ

«Համաճարակաբանության և հիգիենայի կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպություն	
Գործադիր տնօրեն	4,22
Բժիշկներ՝	
Հակաժանտախտային բաժանմունքի բժիշկ	3,82
ա) ՁԻԱՀ-ի և հատուկ վտանգավոր ու վարակիչ ինֆեկցիոն լաբորատորիաների	3,68
բ) սանհիգիենայի բաժանմունքների, սննդի լաբորատորիայի, համաճարակաբանական բաժնի	
- ք. Ստեփանակերտի հիմնարկներում	2,74
- այլ բնակավայրերում	2,87
Միջին բուժանձնակազմ՝	
ա) ՁԻԱՀ-ի և հատուկ վտանգավոր ու վարակիչ ինֆեկցիոն լաբորատորիաների	2,09
բ) սանհիգիենայի բաժանմունքների, սննդի լաբորատորիայի, համաճարակաբանական բաժնի	1,56
գ) ա) և բ) կետերում չընդգրկված անձնակազմ	1,29
Կրտսեր բուժանձնակազմ՝	
ա) ախտահանիչ, ՁԻԱՀ-ի և հատուկ վտանգավոր ու վարակիչ ինֆեկցիոն լաբորատորիաների	1,72
բ) սանհիգիենայի բաժանմունքների, սննդի լաբորատորիայի, համաճարա- կաբանական բաժնի	1,29
գ) ա) և բ) կետերում չընդգրկված անձնակազմ	1,29
Գլխավոր հաշվապահ	2,37
Տնօրենի տեղակալ տնտեսական գծով	1,69
Տնտեսագետ, հաշվապահ նյութական գծով	1,52
Գանձապահ	1,13
Քարտուղար, էլեկտրամոնտյոր, շենքի նորոգման և սպասարկման բանվոր, հավաքարար, պահակ, տնտեսվար	1,00
Կադրերի գծով տեսուչ	1,17
Համակարգչային օպերատոր	1,04
Ախտահանման ավտոմեքենայի վարորդ	1,48
Վարորդ	1,26
Ինժեներ	1,75
«Դատաբժշկական փորձաքննության բյուրո» պետական ոչ առևտրային կազմակերպություն	
Գործադիր տնօրեն	3,59
Գլխավոր հաշվապահ-տնտեսագետ	1,91
Գործավար-քարտուղար	1,04
Տնտեսվար	1,19
Վարորդ	1,26
Դատաբժշկական փորձաքննություն իրականացնող բժիշկներ	3,24
Լաբորանտ, բուժակ	1,71
Դիահերձարանի սանիտար	1,53
Սանիտար	1,37
Առողջապահության համակարգում ամբուլատոր պոլիկլինիկական ծառայություններ մատուցող հիմնարկների բուժաշխատողներ	
Բժիշկներ՝	
ա) տեղամասային	
- ք. Ստեփանակերտի հիմնարկներում	3,65
- այլ բնակավայրերում	3,81
բ) մաշկավենեռոլոգիական, հոգեթմրաբանական և հակապալարախտային	4,47

դիսպանսերների	
զ) ուռուցքաբանական դիսպանսերների, մասնագիտացված կաբինետների	2,98
- ք. Ստեփանակերտի հիմնարկներում	2,98
-այլ բնակավայրերում	3,11
Միջին բուժանձնակազմ՝	
ա) տեղամասային	1,77
բ) մաշկավեներոլոգիական, հոգեթմրաբանական և հակապալարախտային դիսպանսերների	2,13
զ) ուռուցքաբանական դիսպանսերների, մասնագիտացված կաբինետների	1,43
Կրտսեր բուժանձնակազմ՝	
ա) տեղամասային	1,27
բ) մաշկավեներոլոգիական, հոգեթմրաբանական և հակապալարախտային դիսպանսերների	1,61
զ) ուռուցքաբանական դիսպանսերների, մասնագիտացված կաբինետների	1,27
Զորակոչային և նախազորակոչային տարիքի անձանց փորձաքննության հանձնաժողով՝	
Բժիշկներ	1,45
Միջին բուժանձնակազմ	1,27
Գյուղական բուժամբույատորիաների և բուժման կաբարձական կետերի բուժաշխատողներ	
Բժիշկներ	2,75
Միջին բուժանձնակազմ	1,35
Կրտսեր բուժանձնակազմ	1,20

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ

ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՉՈՒԹՅԱՆ

ՊԵՏ-ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ

Ա. ԼԱԶԱՐՅԱՆ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

11 մարտի 2019թ.

N 137-Ն

ք. Ստեփանակերտ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
2015 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 12-Ի N 49-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Իրավական ակտերի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 71-րդ հոդվածին համապատասխան՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **ս ք ո շ ու մ է.**

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2015 թվականի փետրվարի 12-ի «Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում գյուղատնտեսական հումք վերամշակող իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերին ավելացված արժեքի հարկի գումարի փոխհատուցման կարգը հաստատելու մասին» N 49-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները.

1) որոշման վերնագրում և որոշմամբ հաստատված կարգի վերնագրում «ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ» բառերը փոխարինել «ԱՐՑԱԽԻ» բառով.

2) որոշման տեքստում և որոշմամբ հաստատված կարգում, բացառությամբ «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի» և «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությունը» բառերի, «Լեռնային Ղարաբաղի» բառերը փոխարինել «Արցախի» բառով.

3) որոշմամբ հաստատված կարգի՝
ա. 2-րդ կետում «, հացահատիկի թեփ և այլ մշակված հացահատիկներ (թեփահանած, տափակեցրած, փաթիլների վերածած, ծեծած, մանրաձավարի տեսքով կամ մանրատած)» բառերը փոխարինել «և հացահատիկի թեփ» բառերով,

բ. 3-րդ կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ 2.1-ին և 2.2-րդ ենթակետերով.

«2.1) **գյուղատնտեսական գործունեություն**՝ գյուղատնտեսական մթերքների արտադրություն, փաթեթավորում, տարայավորում, պահեստավորում, տեղափոխում, շուկայահանում և դրանց առնչվող ծառայությունների մատուցում.

2.2) **գյուղատնտեսական հումք**՝ գյուղատնտեսական գործունեության ընթացքում արտադրված բուսական կամ կենդանական ծագման հումք, որն աշխատանքի ազդեցությամբ կրել է որոշակի փոփոխություններ և ենթակա է հետագա վերամշակման, այդ թվում՝ բուսական ծագման գյուղատնտեսական հումքեր՝ յուղատու մշակաբույսեր (արևածաղիկ, սոյա, կտավատ և հլածուկ), հատիկային կուլտուրաներ՝ հացահատիկային մշակաբույսեր (ցորեն, գարի, վարսակ և աշորա), կորեկանման մշակաբույսեր (կորեկ, սորգո, եգիպտացորեն և բրինձ) և հատիկային մշակաբույսեր (հնդկացորեն), դեղաբույսեր, հատիկընդեղեն մշակաբույսեր, բանջարեղեն և կարտոֆիլ, պտուղ և հատապտուղ, կենդանական ծագման գյուղատնտեսական հումքեր՝ կաթ, կենդանի ձուկ, խեցգետնակերպեր, կակղամորթեր և ջրային այլ անողնաշարավորներ, կենդանի վիճակում գտնվող գյուղատնտեսական կենդանիներ և թռչուններ»,

գ. 9-րդ կետից հանել «, բայց ոչ ուշ, քան մինչև ընթացիկ տարվա դեկտեմբերի 10-ը,» բառերը և լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր նախադասություն.

«Փոխհատուցումներ չեն կարող իրականացվել, եթե դրանք վերաբերում են այն հաշվետու ժամանակաշրջանին, որից անցել է երեք տարի:»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Մինչև սույն որոշումն ուժի մեջ մտնելը Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2015 թվականի փետրվարի 12-ի N 49-Ն որոշմամբ հաստատված կարգի 9-րդ կետով նախատեսված ժամկետում չներկայացված փաստաթղթերը կարող են ներկայացվել սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո, բացառությամբ եթե դրանք վերաբերում են այն հաշվետու ժամանակաշրջանին, որից անցել է երեք տարի:

«Հաստատում եմ»

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ**

Բ. ՄԱՀԱԿՑԱՆ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

11 մարտի 2019թ.

N 141-Ն

ք. Ստեփանակերտ

ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ՀԱՐՑԵՐԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ
ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԻ ՕՐԻՆԱԿԵԼԻ ՁԵՎԸ
ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Արցախի Հանրապետության կառավարության 2018 թվականի դեկտեմբերի 7-ի N 1004-Ն որոշման 2-րդ կետին համապատասխան՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **առաջում է**.

1. Հաստատել բնակարանային հարցերի հասարակական հանձնաժողովի գործունեության կարգի օրինակելի ձևը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը, իսկ դրա գործողությունը տարածվում է 2019 թվականի հունվարի 1-ից ծագած հարաբերությունների վրա:

«Հաստատում եմ»

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ

Բ. ՄԱՀԱԿՅԱՆ

ՕՐԻՆԱԿԵԼԻ ՁԵՎ
ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ՀԱՐՑԵՐԻ ՀԱՄԱՐԱԿԱՅԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ
ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԻ

1. Բնակարանային հարցերի հասարակական հանձնաժողովը (այսուհետ՝ հանձնաժողով) մշտական հիմունքներով գործող կոլեգիալ մարմին է, որը հասարակական վերահսկողություն է իրականացնում բնակարանային պայմանների բարելավման կարիք ունեցող առանձին սոցիալական խմբերում ընդգրկված քաղաքացիների (այսուհետ՝ քաղաքացիներ) հաշվառման, նրանց բնակարանների կամ բնակելի տների տրամադրման կամ բնակարանների կամ բնակելի տների վերանորոգման նկատմամբ՝ հրապարակայնության ապահովմամբ:

2. Հանձնաժողովն աշխատում է հասարակական հիմունքներով:

3. Հանձնաժողովն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է Արցախի Հանրապետության օրենսդրությամբ և Արցախի Հանրապետության կառավարության 2018 թվականի դեկտեմբերի 7-ի «Բնակարանային պայմանների բարելավման կարիք ունեցող առանձին սոցիալական խմբերում ընդգրկված քաղաքացիների հաշվառման և նրանց բնակարանների կամ բնակելի տների տրամադրման կամ բնակարանների կամ բնակելի տների վերանորոգման կարգը հաստատելու և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պաշտպանության պետական կոմիտեի 1993 թվականի դեկտեմբերի 9-ի Հ. 344 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 1004-Ն որոշմամբ:

4. Հանձնաժողովի անհատական կազմը հաստատում է Արցախի Հանրապետության շրջանի վարչակազմի ղեկավարը, Ստեփանակերտի քաղաքապետը:

5. Հանձնաժողովի անհատական կազմում ընդգրկվում են՝

1) չորս անդամ՝ շրջանների վարչակազմերից, Ստեփանակերտի քաղաքապետարանից.

2) մեկ անդամ՝ Արցախի Հանրապետության աշխատանքի, սոցիալական հարցերի և վերաբնակեցման նախարարությունից.

3) մեկ անդամ՝ արհեստակցական կազմակերպությունից (համաձայնությամբ).

4) մեկ անդամ՝ առողջապահական կազմակերպությունից.

5) մեկ անդամ՝ հասարակական կազմակերպությունից (համաձայնությամբ):

6. Հանձնաժողովն ունի նախագահ, նախագահի տեղակալ և քարտուղար: Հանձնաժողովի նախագահ հանդիսանում է Արցախի Հանրապետության շրջանի վարչակազմի ղեկավարը, Ստեփանակերտի քաղաքապետը կամ Արցախի Հանրապետության շրջանի վարչակազմի ղեկավարի, Ստեփանակերտի քաղաքապետի տեղակալը, իսկ հանձնաժողովի քարտուղարը՝ Արցախի Հանրապետության շրջանի վարչակազմի, Ստեփանակերտի քաղաքապետարանի աշխատակազմի քաղաքացիների հաշվառման իրականացնող մասնագետը:

7. Հանձնաժողովի գործառնություններն են՝

1) քաղաքացիներին հաշվառելու, հաշվառումից հանելու հետ կապված վիճահարույց հարցերի ուսումնասիրությունը.

2) քաղաքացիների բնակարանային պայմանների ուսումնասիրությունը.

3) որպես բնակարանային պայմանների բարելավման կարիք ունեցող հաշվառվելու համար քաղաքացիների բնակարանային պայմանների դիտավորյալ վատթարացման դեպքերի ուսումնասիրությունը.

4) համատեղ սեփականության իրավունքով բնակարան կամ բնակելի տուն ունեցող, սակայն ընտանիքի յուրաքանչյուր անդամի հաշվով բնակելի մակերեսը չբավարարող և որպես բնակարանային պայմանների բարելավման կարիք ունեցող հաշվառված քաղաքացուն բնակարան կամ բնակելի տուն տրամադրելու պայմանների որոշումը.

5) քաղաքացիների հաշվառման հերթացուցակների հաստատումը.

6) հասարակական վերահսկողության իրականացումը՝ քաղաքացիներին հաշվառելու, հաշվառումից հանելու, նրանց բնակարաններ կամ բնակելի տներ տրամադրելու կամ բնակարաններ կամ բնակելի տներ վերանորոգելու հարցերում.

7) իր գործունեության հրապարակայնության ապահովումը.

8) քաղաքացիների հաշվառման, հաշվառումից հանելու, նրանց բնակարաններ կամ բնակելի տներ տրամադրելու կամ բնակարաններ կամ բնակելի տներ վերանորոգելու հետ կապված այլ գործառնությունների իրականացումը:

8. Հանձնաժողովն իր գործառնություններն իրականացնելու նպատակով իրավունք ունի.

1) օրենքով սահմանված կարգով պահանջելու և Արցախի Հանրապետության պետական, տեղական ինքնակառավարման մարմիններից, այլ կազմակերպություններից ստանալու իր գործառնությունների իրականացման համար անհրաժեշտ տեղեկություններ, փաստաթղթեր.

2) անհրաժեշտության դեպքում նիստերին հրավիրել համապատասխան կազմակերպություններից ներկայացուցիչների կամ այլ շահագրգիռ անձանց:

9. Հանձնաժողովի նիստերը հրավիրվում են ըստ անհրաժեշտության: Հանձնաժողովի նիստերն իրավագոր են, եթե դրանց մասնակցում է հանձնաժողովի անդամների ընդհանուր թվի առնվազն երկու երրորդը: Հանձնաժողովի որոշումներն ընդունվում են հանձնաժողովի անդամների ձայների պարզ մեծամասնությամբ: Ձայների հավասարության դեպքում հանձնաժողովի նախագահի ձայնը վճռորոշ է:

10. Հանձնաժողովի որոշումները հիմք են հանդիսանում Արցախի Հանրապետության շրջանների վարչակազմերի, Ստեփանակերտի քաղաքապետարանի կողմից քաղաքացիներին հաշվառելու, հաշվառումից հանելու, նրանց բնակարաններ կամ բնակելի տներ տրամադրելու կամ բնակարաններ կամ բնակելի տներ վերանորոգելու համար:

11. Հանձնաժողովի նախագահը՝

1) ղեկավարում է հանձնաժողովի գործունեությունը.

2) կազմակերպում է հանձնաժողովի աշխատանքը.

3) նշանակում է հանձնաժողովի նիստի անցկացման օրը, ժամը և վայրը.

4) վարում է հանձնաժողովի նիստերը, ստորագրում հանձնաժողովի որոշումները և արձանագրությունները:

12. Հանձնաժողովի նախագահի տեղակալը՝

1) կատարում է հանձնաժողովի նախագահի՝ հանձնաժողովի աշխատանքի կազմակերպմանը վերաբերող հանձնարարականները.

2) հանձնաժողովի նախագահի բացակայության դեպքում փոխարինում է նրան:

13. Հանձնաժողովի քարտուղարը՝

1) նախապատրաստում է հանձնաժողովի նիստի օրակարգի նախագիծը, անհրաժեշտ նյութերը և դրանք ներկայացնում հանձնաժողովի նախագահին.

2) ոչ ուշ, քան հանձնաժողովի նիստից երկու օր առաջ հանձնաժողովի անդամներին է ուղարկում նիստի օրակարգի նախագիծը և անհրաժեշտ նյութերը.

3) կազմակերպում է հանձնաժողովի գործավարությունը.

4) կազմում և ստորագրում է հանձնաժողովի նիստերի արձանագրությունները:

14. Հանձնաժողովի անդամները՝

1) պարտավոր են սահմանված կարգով մասնակցել հանձնաժողովին վերապահված գործառնությունների իրականացման աշխատանքներին.

2) կարող են առաջադրել հարցեր հանձնաժողովի նիստի օրակարգում ընդգրկելու նպատակով:

15. Սույն կարգի 7-րդ կետի 5-րդ ենթակետում նշված հերթացուցակները ձևավորվում են Արցախի Հանրապետության շրջանների վարչակազմերի, Ստեփանակերտի քաղաքապետարանի աշխատակազմերում և առնվազն եռամսյակը մեկ անգամ ներկայացվում հանձնաժողովի հաստատմանը:

16. Արցախի Հանրապետության շրջանների վարչակազմերը, Ստեփանակերտի քաղաքապետարանը քաղաքացիների հաշվառման հաստատված հերթացուցակները տեղադրում են իրենց գտնվելու վայրում՝ տեսանելի տեղում:

**ԱՐՑԱՒԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՉՈՒԹՅԱՆ
ՊԵՏ-ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ**

Ա. ԼԱԶԱՐՅԱՆ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

11 մարտի 2019թ.

N 142-Ն

ք. Ստեփանակերտ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
2004 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 30-Ի N 274 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Իրավական ակտերի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 71-րդ հոդվածին և Արցախի Հանրապետության Նախագահի 2017 թվականի սեպտեմբերի 25-ի ՆՀ-103-Ն հրամանագրին համապատասխան՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **առաջում է**.

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2004 թվականի հուլիսի 30-ի «Առանց ծնողական խնամքի մնացած երեխաներին բնակարան տրամադրելու կարգը հաստատելու մասին» N 274 որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

1) որոշման վերնագրում, 1-ին կետում, որոշմամբ հաստատված հավելվածի վերնագրում, 1-3-րդ կետերում, II բաժնի վերնագրում, 4-րդ կետի 1-ին, 3-րդ պարբերություններում, 6-րդ կետում, 8-11-րդ կետերում, 19-րդ կետի «կարիք» բառից առաջ, 20-րդ կետում, N 1, N 2, N 3 ձևերում «բնակարան» բառը և դրա հոլովաձևերը փոխարինել «բնակարան (բնակելի տուն)» բառերով և դրանց հոլովաձևերով.

2) որոշման 2-րդ կետի «ա», «բ», «գ», «դ» ենթակետերը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«ա) առանց ծնողական խնամքի մնացած երեխային բնակարան (բնակելի տուն) տրամադրվում է պետական սոցիալական նվազագույն չափորոշիչներին համապատասխան՝ «Գնումների մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքով սահմանված կարգով Արցախի Հանրապետության պետական բյուջեի միջոցների հաշվին բնակարան (բնակելի տուն) գնելու միջոցով: Գնումների պատվիրատուն Արցախի Հանրապետության շրջանների վարչակազմերն են (Ստեփանակերտի քաղաքապետարանը),

բ) պետական սոցիալական նվազագույն չափորոշիչներին համապատասխանում է առնվազն երկու սենյականոց բնակարանը (բնակելի տունը), որի բնակելի մակերեսը որոշվում է Արցախի Հանրապետության կառավարության 2018 թվականի դեկտեմբերի 7-ի N 1004-Ն որոշմամբ հաստատված N 1 հավելվածով նախատեսված կարգով,

գ) առանց ծնողական խնամքի մնացած երեխային բնակարանը (բնակելի տունը) տրամադրվում է անհատույց օգտագործման իրավունքով՝ տասը տարի ժամկետով: Նշված ժամկետը լրանալուց հետո բնակարանը (բնակելի տունը) սեփականության իրավունքով փոխանցվում է առանց ծնողական խնամքի մնացած երեխային, իսկ վերջինս ամուսնացած լինելու դեպքում՝ ընտանիքին՝ համատեղ սեփականության իրավունքով,

դ) սույն կետի «ա» ենթակետով նախատեսված կարգով գնված բնակարանը (բնակելի տունը) հանձնվում է Արցախի Հանրապետության շրջանների վարչակազմերի (Ստեփանակերտի քաղաքապետարանի) տնօրինությանը և կարող է բաշխվել և վերաբաշխվել բացառապես սույն որոշման 1-ին կետով սահմանված կարգով,».

3) որոշմամբ հաստատված հավելվածի՝

ա. 1-ին կետի «սահմանվում է» բառերից հետո, 2-րդ կետում, 11-րդ կետի «բ» ենթակետում, 16-րդ կետում «Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն» բառերը և դրանց հոլովածները փոխարինել «Արցախի Հանրապետություն» բառերով և դրանց հոլովածներով,

բ. 3-րդ, 10-րդ, 20-րդ կետերում, N 2 ձևում «բնակելի տարածություն» բառերը և դրանց հոլովածները փոխարինել «բնակարան (բնակելի տուն)» բառերով և դրանց հոլովածներով,

գ. 4-րդ կետի 2-րդ պարբերությունում «կամ բնակելի տարածություն օտարած չլինելու մասին Լեռնային Ղարաբաղի Հանրապետության անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի» բառերը փոխարինել «(բնակելի տուն) օտարած չլինելու մասին Արցախի Հանրապետության Էկոնոմիկայի և արտադրական ենթակառուցվածքների նախարարության աշխատակազմի անշարժ գույքի կադաստրի վարչության» բառերով,

դ. 5-րդ, 7-րդ, 14-15-րդ կետերն ուժը կորցրած ճանաչել,

ե. 6-րդ կետում «շրջանային սոցալախոսության կենտրոնի (Ստեփանակերտի քաղաքապետարանի առողջապահության և սոցիալական պաշտպանության բաժնի)» բառերը փոխարինել «տեղական ինքնակառավարման մարմնի» բառերով,

զ. 11-րդ կետից հանել «բնակարանային» բառը,

է. 12-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«12. Տեղական ինքնակառավարման մարմիններում կազմվում են հաշվառման վերցված՝ բնակարանի (բնակելի տան) կարիք ունեցող անձանց հերթացուցակները, որոնցից առանձնացվում են երեխաների խնամք և պաշտպանություն իրականացնող հաստատությունում բնակվող՝ բնակարան (բնակելի տուն) չունեցող անձանց արտահերթ հերթացուցակները:

Սույն կետում նշված հերթացուցակները կազմվում են երեք օրինակից (Ստեփանակերտի քաղաքապետարանում 2 օրինակից) և հաստատվում համայնքի ղեկավարի կողմից: Հերթացուցակների մեկ օրինակն ուղարկվում է Արցախի Հանրապետության շրջանների վարչակազմեր, մեկ օրինակը՝ Արցախի Հանրապետության աշխատանքի, սոցիալական հարցերի և վերաբնակեցման նախարարություն (այսուհետ՝ նախարարություն), իսկ մյուսը պահվում է տեղական ինքնակառավարման մարմնում:»,

ը. 13-րդ կետում «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության սոցիալական ապահովության նախարարությունը» բառերը փոխարինել «Նախարարությունը» բառով, իսկ «՝ ըստ սույն կարգի 12-րդ կետում նշված առաջնահերթության» բառերը հանել,

թ. 17-18-րդ կետերը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«17. Բնակարանի (բնակելի տան) կարիք ունեցող անձին բնակարանը (բնակելի տունը) տրամադրվում է Արցախի Հանրապետության կառավարության որոշման հիման վրա: Արցախի Հանրապետության շրջանի վարչակազմի ղեկավարը (Ստեփանակերտի քաղաքապետը), հիմք ընդունելով Արցախի Հանրապետության կառավարության որոշումը, բնակարանի (բնակելի տան) կարիք ունեցող անձի հետ կնքում է բնակարանի (բնակելի տան) անհատույց օգտագործման պայմանագիր (այսուհետ՝ պայմանագիր):

18. Բնակարանի (բնակելի տան) կարիք ունեցող անձը պարտավոր է պայմանագրի կնքումից հետո 30 օրվա ընթացքում զբաղեցնել իրեն տրամադրված բնակարանը (բնակելի տունը): Արցախի Հանրապետության շրջանի վարչակազմի ղեկավարը (Ստեփանակերտի քաղաքապետը), պայմանագրի հիման վրա, վեցամսյա պարբերականությամբ ապահովում է բնակարանի (բնակելի տան) կարիք ունեցող անձի կողմից բնակարանում (բնակելի տանը) բնակվելու վերաբերյալ փաստի ստուգման և համապատասխան ակտի կազմման աշխատանքները:»,

Ժ. 19-րդ կետում «Բնակարանի տրամադրման պայմանագրի» բառերը փոխարինել «Պայմանագրի» բառով,

Ժա. N 2 ձևում «Սոցիալական ապահովության շրջանային (քաղաքային) կենտրոնի (բաժնի) տնօրեն (վարիչ)» բառերը փոխարինել «Տեղական ինքնակառավարման մարմնի ղեկավար» բառերով,

Ժբ. N 4 ձևն ուժը կորցրած ճանաչել:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից և դրա գործողությունը տարածվում է 2019 թվականի հունվարի 1-ից ծագած հարաբերությունների վրա:

«Հաստատում եմ»

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ**

Բ. ՄԱՀԱԿՅԱՆ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

11 մարտի 2019թ.

N 143-Ն

ք. Ստեփանակերտ

**ՄԵԶՈՆԱՅԻՆ ԶԲԱՂՎԱԾՈՒԹՅԱՆ ԽԹԱՆՄԱՆ ՄԻՋՈՑՈՎ
ԳՅՈՒՂԱՑԻԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆՆ ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ
ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

«Զբաղվածության մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 11-րդ հոդվածի 1-ին մասի 5.1-ին կետին համապատասխան՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **որոշում է.**

1. Հաստատել սեզոնային զբաղվածության խթանման միջոցով գյուղացիական տնտեսությանն աջակցության տրամադրման կարգը՝ համաձայն հավելվածի:

2. Արցախի Հանրապետության աշխատանքի, սոցիալական հարցերի և վերաբնակեցման նախարարին՝ մեկամսյա ժամկետում հաստատել գյուղացիական տնտեսության աջակցության գործարար ծրագրի, աշխատանքների կատարման պլան-ժամանակացույցի ձևերը և գյուղացիական տնտեսության աջակցության պայմանագրի օրինակելի ձևը:

3. Արցախի Հանրապետության աշխատանքի, սոցիալական հարցերի և վերաբնակեցման նախարարին ու Արցախի Հանրապետության գյուղատնտեսության նախարարին՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից մեկամսյա ժամկետում հաստատել սեզոնային զբաղվածության խթանման միջոցով գյուղացիական տնտեսությանն աջակցության տրամադրման զբաղվածության պետական ծրագրի (այսուհետ՝ ծրագիր) համատեղ կազմակերպման և իրականացման համար անհրաժեշտ գյուղատնտեսական մշակաբույսերի մշակման աշխատանքների չափաքանակները՝ ըստ գյուղատնտեսական մշակաբույսերի, և գյուղատնտեսական մշակաբույսերի մշակման աշխատանքների արժեքները:

4. Ծրագրի ուղեկցման աշխատանքների ֆինանսավորումն իրականացնել Արցախի Հանրապետության պետական բյուջեի «Պետական աջակցություն գործազուրկներին» ծախսային ծրագրով նախատեսված միջոցների հաշվին:

5. Արցախի Հանրապետության շրջանների վարչակազմերի ղեկավարներին՝

1) աջակցել ծրագրի կազմակերպման և իրականացման աշխատանքներին.

2) մինչև 2019 թվականի ապրիլի 15-ը, իսկ յուրաքանչյուր հաջորդ տարվա համար մինչև տվյալ տարվա փետրվարի 15-ը՝

ա. գյուղական համայնքների ղեկավարներից ստանալ ծրագրում ընդգրկման ենթակա աշխատաշուկայում անմրցունակ, գյուղատնտեսական նշանակության հողի սեփականատեր հանդիսացող անձանց (այսուհետ՝ հող օգտագործող) վերաբերյալ առաջարկությունները՝ համապատասխան համայնքի ղեկավարի պատշաճ հիմնավորմամբ,

բ. Արցախի Հանրապետության աշխատանքի, սոցիալական հարցերի և վերաբնակեցման նախարարություն ներկայացնել ծրագրում ընդգրկման ենթակա և ծրագրից օգտվելու ցանկություն հայտնած հող օգտագործողների հաստատված ցուցակները:

6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող տասներորդ օրը:

«Հաստատում եմ»

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՆԱԽԱԳԱՀ

Բ. ՄԱՀԱԿՅԱՆ

ԿԱՐԳ

**ՄԵԶՈՆԱՅԻՆ ԶԲԱՂՎԱԾՈՒԹՅԱՆ ԽԹԱՆՄԱՆ ՄԻՋՈՑՈՎ ԳՑՈՒՂԱՅԻՆԱԿԱՆ
ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ**

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգով կարգավորվում են աշխատաշուկայում անմրցունակ, գյուղատնտեսական նշանակության հողի սեփականատեր հանդիսացող անձանց (այսուհետ՝ հող օգտագործող), սեզոնային զբաղվածության խթանման միջոցով, գյուղացիական տնտեսությունների աջակցության տրամադրման ծրագրի (այսուհետ՝ ծրագիր) իրականացման հետ կապված հարաբերությունները:

2. Ծրագրի նպատակը սեզոնային զբաղվածության ապահովման միջոցով գյուղական բնակավայրերի բնակչության ժամանակավոր զբաղվածության ապահովման համար պայմանների ստեղծման և իրավիճակից բխող մարտահրավերներին արագ արձագանքման միջոցով՝ գյուղացիական տնտեսություններին աջակցելն է:

3. Ծրագրում ընդգրկված են՝

1) հող օգտագործողը, որը որպես գործազուրկ հաշվառվել է Արցախի Հանրապետության աշխատանքի, սոցիալական հարցերի և վերաբնակեցման նախարարության (այսուհետ՝ նախարարություն) աշխատանքի և զբաղվածության գործակալությունում (այսուհետ՝ գործակալություն):

2) գործակալությունում հաշվառված աշխատանք փնտրող անձը, որն աշխատանքային պայմանագրով՝ որպես վարձու աշխատող, կամ քաղաքացիաիրավական պայմանագրով՝ որպես որոշակի ծառայություններ մատուցող կամ աշխատանքներ կատարող, ներգրավվում է ծրագրի շրջանակներում իրականացվող աշխատանքներում:

4. Ծրագիրն առաջնահերթության կարգով իրականացվում է գյուղացիական տնտեսության բնական պատճառներով ստացած վնասների վերականգնման համար:

5. Հող օգտագործողին տրվում է ծրագրում ընդգրկվելու առաջնահերթություն, եթե նրա՝

- 1) ընտանիքում առկա են երկու և ավելի անչափահաս:
- 2) ընտանիքի անդամներից մեկը հաշմանդամություն ունեցող անձ է:

6. Ծրագրի առավելագույն տևողությունը որոշվում է գյուղատնտեսական մշակաբույսի մշակման համար սույն կարգի 10-րդ կետի 2-րդ ենթակետում նշված պլան-ժամանակացույցով նախատեսված կատարման ենթակա աշխատանքների և (կամ) ծառայությունների իրականացման ժամկետներին համապատասխան:

7. Մեկ ծրագրի արժեքը չի կարող գերազանցել 700 000 ՀՀ դրամը:

8. Ծրագիրը ֆինանսավորվում է՝

- 1) Արցախի Հանրապետության պետական բյուջեի միջոցների հաշվին:
- 2) օրենքով չարգելված այլ աղբյուրներից՝ Արցախի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

II. ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

9. Գործակալության աշխատողը, Արցախի Հանրապետության շրջանի վարչակազմի աշխատակազմի գյուղատնտեսության համապատասխան ստորաբաժանման աշխատողի (այսուհետ՝ խորհրդատու) և գյուղական համայնքի ղեկավարի հետ միասին՝

- 1) այցելում են հող օգտագործողին:
- 2) հող օգտագործողին իրազեկում են ծրագրի վերաբերյալ:
- 3) փաստագրում են մշակման ենթակա հողատարածքի գտնվելու վայրը, չափը:
- 4) գնահատում են հող օգտագործողի կողմից հողի մշակման կարիքներն ու հնարավորությունները:

5) հող օգտագործողին տրամադրում են խորհրդատվություն՝ գյուղացիական տնտեսության աջակցության գործարար ծրագիր (այսուհետ՝ գործարար ծրագիր) կազմելու համար:

10. Գործարար ծրագիրը կազմվում է երեք օրինակից, որում նշվում են՝

- 1) գործարար ծրագրի իրականացման նպատակը.
- 2) կատարման ենթակա աշխատանքների պլան-ժամանակացույցը (այսուհետ՝ պլան-ժամանակացույց)՝ Արցախի Հանրապետության աշխատանքի, սոցիալական հարցերի և վերաբնակեցման նախարարի (այսուհետ՝ նախարար) հաստատած ձևին համապատասխան.
- 3) պլան-ժամանակացույցով նախատեսված աշխատանքների իրականացման համար անհրաժեշտ աշխատողների ընդհանուր թիվը.
- 4) գործարար ծրագրում ընդգրկվող անձանց կողմից իրականացման ենթակա աշխատանքների բնույթը:
11. Սույն կարգի 9-րդ կետի 5-րդ ենթակետում նշված գործարար ծրագրի ձևը հաստատում է նախարարը:
12. Հող օգտագործողի ներկայացրած գործարար ծրագիրը գործակալության կողմից հավանության արժանանալու դեպքում, գործակալության պետը երկու օրինակից հող օգտագործողի հետ կնքում է գյուղացիական տնտեսության աջակցության պայմանագիր (այսուհետ՝ պայմանագիր), որի անբաժանելի մաս է կազմում գործարար ծրագիրը: Պայմանագրի օրինակներից մեկը տրվում է հող օգտագործողին, իսկ մյուսը՝ մնում գործակալությունում: Պայմանագրի օրինակելի ձևը հաստատում է նախարարը:
13. Հող օգտագործողը, որպես գործատու, ծրագրում ընդգրկված յուրաքանչյուր աշխատողի հետ կնքում է աշխատանքային և (կամ) քաղաքացիաիրավական պայմանագիր՝ հիմք ընդունելով պայմանագրի և գործարար ծրագրի պայմանները և ծրագրով նախատեսված ֆինանսական աջակցություն ստանալու նպատակով դրանց պատճենները տրամադրում գործակալությանը:
14. Գործակալությունն աջակցում է հող օգտագործողին ծրագրի շրջանակներում Արցախի Հանրապետության օրենսդրությամբ պահանջվող հաշվապահական հաշվառման վարման, օրենքով սահմանված կարգով հարկերի, պարտադիր դրոշմանիշային վճարի հաշվարկման, վճարման, գրանցման հայտի և անձնավորված հաշվարկի ձևավորման և հարկային մարմին ներկայացման գործառնությունների իրականացմանը:
15. Նախարարությունը ծրագրի շրջանակներում ֆինանսական աջակցություն ստացող հող օգտագործողների հաստատված ցուցակները ներկայացնում է Արցախի Հանրապետության ֆինանսների նախարարություն՝ հող օգտագործողների հարկային պարտավորությունների կատարման նկատմամբ հսկողություն իրականացնելու նպատակով:
16. Սույն կարգի 24-րդ կետով նախատեսված դեպքերում պայմանագրի գործողությունը դադարեցվելու դեպքում նախարարությունն այդ մասին երկօրյա ժամկետում գրավոր տեղեկացնում է Արցախի Հանրապետության ֆինանսների նախարարությանը:

III. ԾՐԱԳՐՈՎ ՆԱԽՍԵՏՎԱԾ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԿԱՐԳ ԵՎ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

17. Հող օգտագործողը պայմանագիրը կնքելուց հետո բանկային հաշիվ չունենալու դեպքում եռօրյա ժամկետում բացում է բանկային հաշիվ և գործակալություն ներկայացնում հայտարարություն իր բանկային հաշվի տվյալների մասին:
18. Գործակալության աշխատողը, խորհրդատուն և գյուղական համայնքի ղեկավարը գնահատում են պլան-ժամանակացույցով նախատեսված աշխատանքների և (կամ) ծառայությունների կատարողականը (այսուհետ՝ կատարողական) ու ֆինանսավորման նպատակով մինչև հաշվետու ամսվան հաջորդող ամսվա 3-ը ներկայացնում գործակալություն:
19. Պայմանագրով նախատեսված գումարը հող օգտագործողին վճարվում է՝ հիմք ընդունելով գնահատված ամսական կատարողականը:
20. Գործակալությունը սույն կարգի 19-րդ կետում նշված ամսական կատարողականի հիման վրա, ֆինանսավորման նպատակով, երեք աշխատանքային օրվա ընթացքում կազմում և նախարարության աշխատակազմ է ներկայացնում ծրագրի շրջանակներում հաշվետու ամսում իրականացված աշխատանքների մասին ամփոփ տեղեկություն:
21. Նախարարության աշխատակազմը գործակալությունից ամփոփ տեղեկությունը ստանալուց հետո երեք աշխատանքային օրվա ընթացքում Արցախի Հանրապետության ֆինանսների նախարարություն է ներկայացնում ծրագրի ֆինանսավորման հայտ:

22. Արցախի Հանրապետության ֆինանսների նախարարությունը ծրագրի ֆինանսավորման հայտը ստանալուց հետո զբաղվածության պետական նպատակային ծրագրերի իրականացման համար նախարարության աշխատակազմի անվամբ բացված գանձապետական հաշվին է փոխանցում ծրագրի դիմաց վճարման ենթակա գումարը:

23. Ծրագրի դիմաց վճարման ենթակա գանձապետական հաշվին փոխանցված գումարը պայմանագրով նախատեսված ժամկետներում փոխանցվում է հող օգտագործողի բանկային հաշվին:

**IV. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԴԱԴԱՐՅՈՒՄԸ ԵՎ ՈՉ
ՆՊԱՍԱԿԱՑԻՆ ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ
ՄԻՋՈՑՆԵՐԸ ՎԵՐԱԴԱՐՁՆԵԼԸ**

24. Պայմանագրի գործողությունը դադարեցվում է՝

1) կողմերի համաձայնությամբ.

2) հող օգտագործողի դիմումի համաձայն.

3) գործակալության պետի կողմից, եթե ամսական կատարողականը երկու անգամ գնահատվել է ոչ բավարար:

25. Մույն կարգի պահանջներին համապատասխան տրամադրված և ոչ նպատակային օգտագործված ֆինանսական միջոցները ենթակա են վերադարձման Արցախի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

**V. ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ
ԵՎ ՄՈՆԻԹՈՐԻՆԳԸ**

26. Տվյալ տարվա ընթացքում ծրագրի շրջանակներում իրականացված աշխատանքների մասին տեղեկատվությունն արտացոլվում է նախարարության պաշտոնական կայքէջում և նախարարության կողմից վարվող տեղեկատվական շտեմարանում:

27. Ծրագիրը կազմակերպում և իրականացնում է գործակալությունը, իսկ ծրագրի մոնիթորինգը և գնահատումն իրականացնում է նախարարությունը:

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՉՈՒԹՅԱՆ
ՊԵՏ-ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԴԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ**

Ա. ԼԱԶԱՐՅԱՆ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

13 մարտի 2019թ.

N 148-Ն

ք. Ստեփանակերտ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵՈՒՄ
ՎԵՐԱԲԱՇԽՈՒՄ, ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2018
ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 28-Ի N 1135-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Արցախի Հանրապետության 2019 թվականի պետական բյուջեի մասին» Արցախի Հանրապետության օրենքի 9-րդ, «Իրավական ակտերի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 71-րդ հոդվածները և ղեկավարվելով Արցախի Հանրապետության Նախագահի 2017 թվականի սեպտեմբերի 25-ի ՆՀ-108-Ն հրամանագրով սահմանված կարգի 6-րդ և 92-րդ կետերով Արցախի Հանրապետության կառավարությունը **որոշում է.**

1. «Արցախի Հանրապետության 2019 թվականի պետական բյուջեի մասին» Արցախի Հանրապետության օրենքի N 1 հավելվածի N 1 աղյուսակի ցուցանիշներում կատարել վերաբաշխում և Արցախի Հանրապետության կառավարության 2018 թվականի դեկտեմբերի 28-ի «Արցախի Հանրապետության 2019 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների և Արցախի Հանրապետության 2019 թվականի պետական բյուջեում վերաբաշխում կատարելու մասին» N 1135-Ն որոշման N 2 հավելվածի N 1 աղյուսակի և N 3 հավելվածի ցուցանիշներում կատարել փոփոխություններ՝ համաձայն NN 1 և 2 հավելվածների:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից, իսկ դրա գործողությունը տարածվում է 2019 թվականի փետրվարի 1-ից հետո ծագած հարաբերությունների վրա:

«Հաստատում եմ»

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ՆԱԽԱՐԱՐ

Գ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

**«ԱՐՑԱՒԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՄԱՍԻՆ» ԱՐՑԱՒԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ N 1 ՀԱՎԵԼՎԱԾԻ N 1 ԱՂՅՈՒՄԱԿՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՂ
ՎԵՐԱԲԱՇՏՈՒՄԸ ԵՎ ԱՐՑԱՒԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2018 ԹՎԱԿԱՆԻ
ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 28-Ի N 1135-Ն ՈՐՈՇՄԱՆ N 2 ՀԱՎԵԼՎԱԾԻ N 1 ԱՂՅՈՒՄԱԿԻ
ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

(հազ.դրամ)

Բաժին	Խումբ	Դաս	Բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման բաժինների, խմբերի և դասերի, ֆինանսավորվող ծրագրերի և վերջիններս իրականացնող մարմինների անվանումները	Ցուցանիշների փոփոխությունը (ավելացումները նշված են դրական նշանով, իսկ նվազեցումները՝ փակագծերում)			
				Առաջին եռամսյակ	Առաջին կիսամյակ	Ինն ամիս	Տարի
			ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ	250 000,0	-	-	-
			այլ թվում՝				
04			ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ	250 000,0	-	-	-
	2		Գյուղատնտեսություն, անտառային տնտեսություն, ձկնորսություն և որսորդություն	250 000,0	-	-	-
		1	Գյուղատնտեսություն	250 000,0	-	-	-
		10	Աջակցություն գյուղի և գյուղատնտեսության աջակցության հիմնադրամին	250 000,0	-	-	-
			ԱՀ գյուղատնտեսության նախարարություն	250 000,0	-	-	-
	9		Տնտեսական հարաբերություններ (այլ դասերին չպատկանող)	-	-	-	-
		1	Տնտեսական հարաբերություններ (այլ դասերին չպատկանող)	-	-	-	-
		04	Ընթացիկ նորոգման, բարելավման և կոմունալ տնտեսության գծով ԱՀ շրջանների կարողությունների զարգացման ծախսեր	-	-	-	-
			ԱՀ կառավարություն	(700 000,0)	(1 400 000,0)	(2 400 000,0)	(3 000 000,0)
			Ասկերանի շրջանի վարչակազմ	100 500,0	200 400,0	344 000,0	430 000,0
			Հադրութի շրջանի վարչակազմ	115 000,0	229 900,0	393 600,0	492 000,0
			Մարտակերտի շրջանի վարչակազմ	116 300,0	233 000,0	399 200,0	499 000,0
			Մարտունու շրջանի վարչակազմ	129 200,0	258 700,0	443 200,0	554 000,0
			Շահումյանի շրջանի վարչակազմ	37 600,0	75 100,0	128 800,0	161 000,0
			Շուշիի շրջանի վարչակազմ	46 800,0	93 600,0	160 800,0	201 000,0
			Քաշաթաղի շրջանի վարչակազմ	154 600,0	309 300,0	530 400,0	663 000,0
	10		ՄՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ	-	-	-	-
	2		Ծերություն	(3 210,0)	(2 200,0)	(1 360,0)	-
		1	Ծերություն	(3 210,0)	(2 200,0)	(1 360,0)	-
		06	Աշխատանքային կենսաթոշակներ	(3 210,0)	(2 200,0)	(1 360,0)	-
			ԱՀ աշխատանքի, սոցիալական հարցերի և վերաբնակեցման նախարարություն	(3 210,0)	(2 200,0)	(1 360,0)	-
	9		Սոցիալական պաշտպանություն (այլ դասերին չպատկանող)	3 210,0	2 200,0	1 360,0	-

	2	Սոցիալական պաշտպանությանը տրամադրվող օժանդակ ծառայություններ (այլ դասերին չպատկանող)	3 210,0	2 200,0	1 360,0	-
	09	ԱՀ ընտանիքների կարիքավորության գնահատման համակարգի մշակում և ներդրում	3 210,0	2 200,0	1 360,0	-
		ԱՀ աշխատանքի, սոցիալական հարցերի և վերաբնակեցման նախարարություն	3 210,0	2 200,0	1 360,0	-
11		ՀԻՄՆԱԳԱՆ ԲԱԺԻՆԵՐԻՆ ԶԴԱՍՎՈՂ ԾԱԽՍԵՐ	-	-	-	-
	1	Պետական բյուջեի և համայնքների պահուստային ֆոնդեր	(55 000,0)	-	-	-
	1	Պետական բյուջեի պահուստային ֆոնդ	(55 000,0)	-	-	-
	01	Պետական բյուջեի պահուստային ֆոնդ	(55 000,0)	-	-	-
		ԱՀ կառավարություն	(55 000,0)	-	-	-
	2	Այլ ծախսեր	55 000,0	-	-	-
	1	Այլ ծրագրեր	55 000,0	-	-	-
	02	Կապիտալ ներդրումներ	-	-	-	-
		ԱՀ կառավարություն	(3 476 700,0)	(8 943 400,0)	(13 355 100,0)	(19 086 800,0)
		ԱՀ քաղաքաշինության նախարարություն	3 251 300,0	8 369 900,0	12 474 100,0	17 911 800,0
		ԱՀ պաշտպանության նախարարություն	10 000,0	20 000,0	35 000,0	50 000,0
		Ստեփանակերտի քաղաքապետարան	124 000,0	314 000,0	500 000,0	630 000,0
		Ասկերանի շրջանի վարչակազմ	20 000,0	54 000,0	81 000,0	115 000,0
		Հաղրութի շրջանի վարչակազմ	14 400,0	38 000,0	56 000,0	80 000,0
		Մարտակերտի շրջանի վարչակազմ	18 000,0	46 500,0	65 000,0	92 800,0
		Մարտունու շրջանի վարչակազմ	20 000,0	53 000,0	78 000,0	112 000,0
		Շահումյանի շրջանի վարչակազմ	7 000,0	19 000,0	28 000,0	40 000,0
		Շուշիի շրջանի վարչակազմ	7 000,0	19 000,0	28 000,0	40 000,0
		Քաջաթաղի շրջանի վարչակազմ	5 000,0	10 000,0	10 000,0	15 200,0
	07	Նախորդ տարիներից առաջացած պարտքերի մարում	55 000,0	-	-	-
		ԱՀ կառավարություն	55 000,0	-	-	-

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԵՐԻ ԿԱՌԱՎԱՐԶՈՒԹՅԱՆ
ՊԵՏ-ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ

Ա. ԼԱԶԱՐՅԱՆ

**ԱՐՑԱՒԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2018 ԹՎԱԿԱՆԻ
 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 28-Ի N 1135-Ն ՈՐՈՇՄԱՆ N 3 ՀԱՎԵԼՎԱԾՈՒՄ
 ԿԱՏԱՐՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

(հազ.դրամ)

ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՀԱՎԵԼՈՒՐԴԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՈՒ ԴՐԱՆՑ ՏԱՐԲԵՐԻ ԱՆՎԱՆՈՒՄՆԵՐԸ	Ցուցանիշների փոփոխությունը (ավելացումները նշված են դրական նշանով, իսկ նվազեցումները՝ փակագծերում)			
	Առաջին եռամսյակ	Առաջին կիսամյակ	Ինն ամիս	Տարի
ԸՆԴԱՄԵՆԸ	250 000,0	-	-	-
այդ թվում՝				
Փոխառու գուտ միջոցներ	250 000,0	-	-	-
1. Վարկերի և փոխառվածությունների ստացում	250 000,0	-	-	-

ԱՐՑԱՒԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
 ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՉՈՒԹՅԱՆ
 ՊԵՏ-ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԴԵԿՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ

Ա. ԼԱԶԱՐՅԱՆ

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱՐԱՆ**

ԼՂՀ վերաքննիչ դատարանի որոշում քրեական նյութ ԸԻԴ /0001/06/19
 Քրեական նյութ ԸԻԴ /0001/06/19
 Նախագահող դատավոր՝ Լ.Ավանեսյան
 Դատավորներ՝ Ա.Հայրապետյան
 Կ.Սաղյան

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀԱՆՈՒՆ ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

ք.Ստեփանակերտ 27-ին փետրվարի 2019թ.

ԱՀ Գերագույն դատարանը (այսուհետ՝ Գերագույն դատարան) վճռաբեկության կարգով.

նախագահությամբ՝ դատավոր՝ Կ.Ղարայանի
 դատավորներ՝ Գ.Գրիգորյանի
 Հ.Աբրահամյանի
 Հ.Խաչատրյանի
 Ի.Կարապետյանի

դռնփակ դատական նիստում քննելով մեղադրյալ Ալեքսեյ Վլադիմիրի Բալայանի նկատմամբ կալանքը որպես խափանման միջոց կիրառելու մասին ԸԻԴ/0001/06/19 քրեական նյութով ԱՀ վերաքննիչ դատարանի 2019թ. հունվարի 23-ի որոշման դեմ մեղադրյալ Ա.Բալայանի պաշտպան Գ.Մալխասյանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. Գործի դատավարական նախապատմությունը

Ըստ նախաքննության մարմնի տվյալների՝ 2019թ. հունվարի 11-ին ժամը 01.20-ի սահմաններում, Բ.Միրզոյանը ներկայացել է ԱՀ Մարտակերտ քաղաքի Ազատամարտիկների փողոցի 166ա հասցեում տեղակայված «ՄՆԱՆ» ՍՊԸ գրասենյակ, որտեղ առանց պատճառի, սեփական անձի առավելությունը ցուցադրելու շարժառիթով, դիտավորյալ խախտել է հասարակական կարգը և ընկերության տաքսի ծառայության բնականոն գործունեությունը, բացահայտ անհարգալից վերաբերմունք դրսևորել ընկերության տարածքում գտնվող անձանց նկատմամբ՝ վիճաբանության մեջ է մտել ընկերության տնօրեն Ա.Բալայանի և նույն վայրում գտնվող Ս.Ղուկասյանի հետ, որի ընթացքում իր հետ նախապես բերված որպես զենք օգտագործվող հատուկ հարմարեցված մահակը գործադրելով, հարվածներ է հասցրել վերջիններիս, բացի այդ, իր մոտ ապօրինի պահվող «Մաուզեր» տեսակի 7.65մմ տրամաչափի «411667» համարի ատրճանակով մեկ անգամ կրակել է գրասենյակում, իսկ Ա.Բալայանը դիտավորությամբ Բ.Միրզոյանի առողջությանը ծանր վնաս պատճառելու նպատակով իր մոտ ապօրինի պահվող «ՊՄ» տեսակի 9մմ տրամաչափի «KM 4389» համարի ատրճանակից կրակել է Բ.Միրզոյանի ձախ ոտքին և նրա առողջությանը պատճառել ծանր վնաս՝ ձախ ազդրի ստորին երրորդականի հրազենային գնդակային միջանցիկ վիրավորում:

Նախաքննության մարմնի 2019թ. հունվարի 11-ի որոշմամբ դեպքի առթիվ, ԼՂՀ քրեական օրենսգրքի 269-րդ հոդվածի 4-րդ մասով, 245-րդ հոդվածի 1-ին

մասով, 111-րդ հոդվածի 1-ին մասով և 245-րդ հոդվածի 1-ին մասով հարուցվել է թիվ 161002.19 քրեական գործը:

2019թ. հունվարի 11-ին՝ ժամը 21.05-ին, ԱՀ ԱՆ «ՀԲԿ» ՓԲԸ վերակենդանացման բաժանմունքում Բ.Միրզոյանը ԼՂՀ քրեական օրենսգրքի 269-րդ հոդվածի 4-րդ մասով և 245-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցագործության կատարման կասկածանքով ձերբակալվել է:

2019թ. հունվարի 11-ին՝ ժամը 21.50-ին ձերբակալվել է Ա.Բալայանը՝ ԼՂՀ քրեական օրենսգրքի 111-րդ հոդվածի 1-ին մասով և 245-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցանքները կատարելու կասկածանքով:

Նախաքննության մարմնի 2019թ. հունվարի 14-ի որոշմամբ Ա.Բալայանը ներգրավվել է որպես մեղադրյալ ԼՂՀ քրեական օրենսգրքի 111-րդ հոդվածի 1-ին մասով և 245-րդ հոդվածի 1-ին մասով:

Որպես մեղադրյալ ներգրավելու մասին որոշման համաձայն՝ Ա.Բալայանը, քննությամբ չպարզված ժամանակահատվածում ապօրինի ձեռք է բերել հրազեն հանդիսացող «ՊՄ» տեսակի 9մմ տրամաչափի «KM 4389» համարի ատրճանակը, այն պահել իր մոտ և կրել, իսկ 2019թ. հունվարի 11-ին ժամը 01.20-ի սահմաններում, ԱՀ Մարտակերտ քաղաքի Ազատամարտիկների փողոցի 166ա հասցեում տեղակայված «ՄՆԱՆ» ՍՊԸ գրասենյակում ՀՀ Իջևան քաղաքի Սպանդարյան փողոցի 25 տան բնակիչ Բ.Միրզոյանի առողջությանը ծանր վնաս պատճառելու նպատակով նշված ատրճանակից դիտավորյալ կրակոց է արձակել Բ.Միրզոյանի ուղղությամբ և վերջինիս առողջությանը պատճառել ծանր վնաս:

Նախաքննության մարմնի 2019թ. հունվարի 14-ի որոշմամբ մեղադրյալ Ա.Բալայանի նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու մասին միջնորդություն է հարուցվել ԱՀ ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան (այսուհետ՝ նաև Առաջին ատյանի դատարան):

Առաջին ատյանի դատարանի 2019թ. հունվարի 15-ի որոշմամբ միջնորդությունը բավարարվել է և մեղադրյալ Ա.Բալայանի նկատմամբ որպես խափանման միջոց կիրառվել կալանավորում՝ 2(երկու) ամիս ժամկետով, իսկ որպես խափանման միջոց կալանքը գրավով փոխարինելու մասին պաշտպանի միջնորդությունը մերժվել է:

Առաջին ատյանի դատարանի վերոնշյալ որոշման դեմ 2019թ. հունվարի 16-ին վերաքննիչ բողոք է բերել մեղադրյալ Ա.Բալայանի պաշտպան Գ.Մալխասյանը:

Վերաքննիչ դատարանը 2019թ. հունվարի 23-ի որոշմամբ մեղադրյալ Ա.Բալայանի պաշտպան Գ.Մալխասյանի բերած վերաքննիչ բողոքը մերժել է, Առաջին ատյանի դատարանի 2019թ. հունվարի 15-ի որոշումը թողնելով օրինական ուժի մեջ:

Վերաքննիչ դատարանի նշված որոշման դեմ վճռաբեկ բողոք է բերել մեղադրյալի պաշտպան Գ.Մալխասյանը:

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Բողոք բերող անձը գտնում է, որ Վերաքննիչ դատարանը խախտել է ԱՀ Սահմանադրության 27-րդ, 28-րդ, 61-րդ, 63-րդ հոդվածների, ԼՂՀ քրեական դատավարության օրենսգրքի 2-րդ, 8-րդ, 11-րդ, 24-րդ, 25-րդ, 116-րդ, 145-148-րդ, 154-րդ, 296-րդ, 299-րդ հոդվածների, Մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի /այսուհետ՝ նաև Կոնվենցիա/ 5-րդ հոդվածի 1-ին կետի գ/ ենթակետի, 3-րդ կետի պահանջները, ինչպես նաև ՄԻԵԴ դիրքորոշումները, արդյունքում կայացնելով բեկանման ենթակա դատական ակտ:

Նշված փաստարկները բողոքաբերը հիմնավորում է հետևյալ կերպ.

Շարադրելով ԱՀ Սահմանադրության 27-րդ հոդվածի, Կոնվենցիայի 5-րդ հոդվածի, ԼՂՀ քրեական դատավարության օրենսգրքի 11-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի օրենսդրական ձևակերպումները, բողոքաբերը փաստարկել է, որ վկայակոչած դրույթների վերլուծությունից, ինչպես նաև Կոնվենցիայի և ՄԻԵԴ նախադեպային որոշումներից բխում է, որ անձի ազատության և անձնական անձեռնմխելիության իրավունքը մարդու այլ իրավունքների հետ մեկտեղ ճանաչվում է անօտարելի և բարձրագույն արժեք: Մարդու այդ հիմնական իրավունքի սահմանափակման իրավաչափության երաշխիքները կանոնակարգող իրավադրույթները մեկնաբանելիս անհրաժեշտ է ելնել մարդու իրավունքները հարգելու, մարդու իրավունքների սահմանափակման միջոցով հիմնական իրավունքը բովանդակազրկելու անթույլատրելիության սկզբունքներից:

Դատական ակտի օրենքով սահմանված կարգով հիմնավորված և պատճառաբանված լինելու համար բավարար չէ օրենքով նախատեսված հիմքերի պարզ շարադրանքը, այլ անհրաժեշտ է կիրառել դատական ակտի պատճառաբանվածության առավել բարձր չափանիշ՝ դատարանի հետևությունները հիմնավորել գործի փաստական հանգամանքներով:

Շարադրելով ԼՂՀ քրեական դատավարության օրենսգրքի 146-րդ հոդվածի բովանդակությունը, բողոքաբերը փաստարկել է, որ նշված իրավադրույթով օրենսդիրը սահմանել է կալանավորման օրինականությունն ու հիմնավորվածությունն ապահովող մի շարք երաշխիքներ, որոնց մեջ առաջին հերթին կարևորվում և առանձնանում են կալանավորման հիմքերը: Դրանք օրենքով նախատեսված այն հանգամանքներն են, որոնք հաստատվում են ապացույցների որոշակի ամբողջությամբ և հնարավորություն են տալիս հիմնավորված ենթադրություններ անել այն մասին, որ անձը, գտնվելով ազատության մեջ, կարող է դրսևորել ոչ պատշաճ վարքագիծ և խոչընդոտել քրեական դատավարության տվյալ փուլի համար սահմանված խնդիրների իրականացմանը:

Բողոք բերող անձի վկայակոչած իրավանորմերի համաձայն՝ ոչ ոքի չի կարելի զրկել ազատությունից այլ կերպ, քան անձի՝ հանցագործություն կատարած լինելու հիմնավոր կասկածի առկայության դեպքում:

Անձի ազատության և անձնական անձեռնմխելիության սահմանափակման հիմքերը սահմանող ԼՂՀ քրեական դատավարության նորմերի վերլուծությունից հետևում է, որ անձի ազատության և անձնական անձեռնմխելիության սահմանափակումը թույլատրվում է միայն բացառիկ դեպքերում՝ օրենքով սահմանված կարգով: Ընդ որում, անձին ազատությունից զրկելու՝ օրենքով թույլատրված հիմքերի ցանկը սպառիչ է, հետևաբար, անձին ազատությունից զրկելը, որը տեղի չի ունենում օրենքով նախատեսված կարգով, կամ սահմանված հիմքերի շրջանակում, կամայական է ու անօրինական: Ուստի, անձի ազատության և անձնական անձեռնմխելիության սահմանափակման յուրաքանչյուր դեպքում անհրաժեշտ է ապահովել այդ սահմանափակման օրինականությունն ու հիմնավորվածությունը: Այսինքն՝ անձին ազատությունից զրկելու համար անհրաժեշտ է հիմնավոր կասկած առ այն, որ նա իրավախախտում է կատարել, ընդ որում՝ յուրաքանչյուր դեպքում կասկածը պետք է լինի ողջամիտ: Սույն գործով կալանավորումը, որպես խափանման միջոց կիրառելու միջնորդության քննարկման արդյունքներով Առաջին ատյանի դատարանը պետք է գործեր նյութերից բխող հիմնավորումներով, այն է՝ արձանագրեր հիմնավոր կասկածի առկայությունը կամ բացակայությունը, իսկ Վերաքննիչ դատարանը վերաքննիչ բողոքի հիմքերի և հիմնավորումների սահմաններում, պետք է ստուգման ենթարկեր Առաջին ատյանի դատարանի դատական ակտի հիմնավորվածությունը:

Բողոքաբերը շեշտել է, որ ստորադաս դատարանները պատշաճ իրավական գնահատման չեն արժանացրել պաշտպանական կողմի հայտնած փաստերը, քրեական գործի նյութերը, արդյունքում սխալ եզրահանգման գաղափարով՝ հիմնավոր կասկածի և կալանավորման հիմքերի վերաբերյալ:

Առաջին աստիճանի դատարանը, դատական ակտում անդրադառնալով մեղադրյալ Ա.Բալայանի՝ ԼՂՀ քրեական օրենսգրքի 111-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված արարքում մեղավորության հարցին, թույլ է տվել ԱՀ Սահմանադրությամբ հռչակված անձի անմեղության կանխավարկածի խախտում, ինչն անտեսվել է Վերաքննիչ դատարանի կողմից:

Բողոքաբերը գտել է, որ ստորադաս դատարանների եզրահանգումները հիմնավոր կասկածը հաստատված համարելու վերաբերյալ վերացական են և հիմնավորված չեն:

Ըստ բողոքաբերի՝ քննիչի և պաշտպանական կողմի՝ Առաջին աստիճանի դատարան ներկայացրած նյութերից, այդ թվում նաև Առաջին աստիճանի դատարանի դատական նիստում հետազոտված՝ Բ.Միրզոյանի զինված հարձակման մի հատվածի տեսագրությունից միանշանակ հետևում է, որ վերջինիս ծանր մարմնական վնասվածք պատճառելու արարքի կատարման մեջ Ա.Բալայանի առնչությունը հիմնավորող փաստական տվյալ առկա չէ, ուստի նման պարագայում Առաջին աստիճանի դատարանը պետք է մերժեր քննիչի միջնորդությունը՝ հիմնավոր կասկածի բացակայության հիմքով: Այս դիրքորոշումը նույնպես պատշաճ իրավական գնահատման չի արժանացել Վերաքննիչ դատարանի կողմից:

Բողոքաբերը փաստել է, որ ԼՂՀ քրեական դատավարության օրենսգրքի նորմերի վերլուծությունից հետևում է, որ քրեական դատավարության օրենսդրությունը սահմանել է կալանավորման կիրառման օրինականությունն ու հիմնավորվածությունն ապահովող մի շարք երաշխիքներ, որոնց մեջ առաջին հերթին կարևորվում են կալանավորման հիմքերը: Դրանք օրենքով նախատեսված այն հանգամանքներն են, որոնք հաստատվում են ապացույցների որոշակի ամբողջությամբ և հնարավորություն են տալիս հիմնավորված ենթադրություններ անել այն մասին, որ անձը, կալանքի տակ չգտնվելով, կարող է դրսևորել ոչ պատշաճ վարքագիծ և խոչընդոտել քրեական դատավարության խնդիրների իրականացմանը:

Ըստ բողոքաբերի՝ Առաջին աստիճանի դատարանը, կալանավորման հարցը քննարկելիս հաշվի չի առել ԼՂՀ քրեական դատավարության օրենսգրքի 146-րդ հոդվածի 3-րդ մասի իրավակարգավորումների՝ Ա.Բալայանի անձը բնութագրող տվյալները, նրա կապն իր բնակության վայրի, ընտանիքի, աշխատանքի հետ, նրա անձնային որակները, հայրենիքի հանդեպ ունեցած վերաբերմունքը, ստացված պետական պարգևն ու այլ էական հանգամանքներ, որոնք իրական հիմք են հանդիսանում նրա վարքագծի պատշաճ գնահատման համար, ինչը հաշվի չի առել նաև Վերաքննիչ դատարանը, դրանով իսկ թույլ տալով էական դատական սխալ:

Բողոքաբերը նաև գտել է, որ ստորադաս դատարանների կողմից հիմնավոր չէ նաև գրավի միջնորդությունը մերժելը:

Ամփոփելով վերը շարադրվածը, բողոքաբերը գտել է, որ ստորադաս դատարանների կողմից թույլ են տրվել օրենքի բազմաթիվ էական ու կոպիտ խախտումներ, որոնցից յուրաքանչյուրը հիմք է հանդիսանում Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու համար, այն է՝ հիմնավոր կասկածի բացակայությունը, օրենքով նախատեսված կալանավորման հիմքի բացակայությունը և ազատությունից զրկելու հետ չկապված խափանման միջոցով մեղադրյալի պատշաճ վարքագիծն ապահովելու մասին քրեական գործով ապացուցված փաստական տվյալներն անտեսելը:

Ելնելով վերոգրյալներից, մեղադրյալ Ա.Բալայանի պաշտպան Գ.Մալխասյանը խնդրել է ամբողջությամբ բեկանել Վերաքննիչ դատարանի 2019թ. հունվարի 23-ի որոշումը և կայացնել նոր դատական ակտ՝ վերացնել Առաջին ատյանի դատարանի թիվ 161002.19 քրեական նյութով մեղադրյալ Ա.Բալայանի նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու մասին քննիչի միջնորդությունը:

3. Գործի փաստական հանգամանքները

Նախաքննության մարմնի 2019թ. հունվարի 14-ի՝ թիվ 161002.19 քրեական գործով կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու միջնորդություն հարուցելու մասին որոշման համաձայն՝ մեղադրյալ Ա.Բալայանի նկատմամբ անհրաժեշտ է որպես խափանման միջոց ընտրել կալանավորումը՝ հաշվի առնելով, որ սույն քրեական գործի փաստական տվյալներով հիմնավորվել է մեղադրյալ Ա.Բալայանի առնչությունը նշված դեպքին, այսինքն, առկա է հիմնավոր կասկած, որ նա կատարել է ԼՂՀ քրեական օրենսգրքի 111-րդ հոդվածի 1-ին մասով և 245-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցագործությունները, որոնք, համապատասխանաբար դասվում են ծանր և միջին ծանրության հանցագործությունների թվին, և դրա համար նախատեսվող ազատազրկման ձևով պատժի առավելագույն ժամկետը մեկ տարուց ավելի է, ինչպես նաև առկա են նրա նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու հիմքերը, այն է՝ Ա.Բալայանն ազատության մեջ մնալով, կարող է կատարել քրեական օրենքով չթույլատրված արարք:

4. Գերագույն դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը

Գերագույն դատարանն արձանագրում է, որ բողոքարկված դատական ակտը վճռաբեկ վերանայման ենթարկելը պայմանավորված է առերևույթ դատական սխալի առկայությամբ:

Բողոքում նշված սահմաններում վերլուծելով գործի նյութերը՝ Գերագույն դատարանը գտնում է, որ վճռաբեկ բողոքը ենթակա է բավարարման, իսկ Վերաքննիչ դատարանի բողոքարկված որոշումը՝ բեկանման, հետևյալ պատճառաբանությամբ.

Գերագույն դատարանը հարկ է համարում ընդգծել, որ կալանավորումը քրեական գործի քննության ընթացքում կիրառվող խափանման միջոցներից ամենախիստն է և այն պետք է ընտրվի միայն այն ժամանակ, երբ խափանման մյուս միջոցները քրեական գործի վարույթի ընթացքում չեն կարող ապահովել անձի պատշաճ վարքագիծը: ԼՂՀ քրեական դատավարության օրենսդրությունը սահմանել է կալանավորման կիրառման օրինականությունն ու հիմնավորվածությունն ապահովող մի շարք երաշխիքներ, որոնց մեջ առաջին հերթին կարևորվում ու առանձնանում են կալանավորման հիմքերը: Դրանք օրենքով նախատեսված այն հանգամանքներն են, որոնք հաստատվում են ապացույցների որոշակի ամբողջությամբ և հնարավորություն են տալիս հիմնավորված ենթադրություններ անել այն մասին, որ անձը, կալանքի տակ չգտնվելով, կարող է դրսևորել ոչ պատշաճ վարքագիծ և խոչընդոտել քրեական դատավարության խնդիրների իրականացմանը:

ԼՂՀ քրեական դատավարության 146-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատարանը, դատախազը, քննիչը կամ հետաքննության մարմինը խափանման միջոց կարող է կիրառել միայն այն դեպքում, երբ քրեական գործով ձեռք բերված նյութերը բավարար հիմք են տալիս ենթադրելու, որ կասկածյալը կամ մեղադրյալը կարող է՝ 1/ թաքնվել քրեական վարույթն իրականացնող մարմնից, 2/ խոչընդոտել մինչդատական վարույթում կամ դատարանում գործի քննությանը՝ քրեական դատավարությանը մասնակցող անձանց վրա անօրինական ազդեցություն գործադրելու, գործի համար

նշանակություն ունեցող նյութերը թաքցնելու կամ կեղծելու, քրեական վարույթն իրականացնող մարմնի կանչով առանց հարգելի պատճառների չներկայանալու կամ այլ ճանապարհով, 3/ կատարել քրեական օրենքով չթույլատրված արարք, 4/ խուսափել քրեական պատասխանատվությունից և նշանակված պատիժը կրելուց, 5/ խոչընդոտել դատարանի դատավճռի կատարմանը: Նշված հոդվածի մեկնաբանությունից հետևում է, որ կալանավորման կիրառման հիմքերն ունեն կանխատեսական, մոտավոր բնույթ, քանի որ ենթադրում են ապագային վերաբերող իրադարձություններ: Ընդ որում, այդ կանխատեսող գործողություններն անհրաժեշտ է հիմնավորել քրեական գործով ձեռք բերված որոշակի նյութերով, որով էլ վերջին հաշվով որոշվում է կալանավորման կիրառման հիմնավորվածությունը:

ԼՂՀ քրեական դատավարության օրենսգրքի 146-րդ հոդվածում թվարկված մեղադրյալի հավանական գործողությունների մասին հետևությունները պետք է հիմնված լինեն գործի նյութերից բխող ողջամիտ կասկածների կամ ենթադրությունների վրա, այսինքն կալանավորման հիմքում չեն կարող դրվել միայն նշված հոդվածում թվարկված իրավական ձևակերպումների վկայակոչումը կամ վերտառումը, այլ բոլոր դեպքերում պետք է դրվեն որոշ փաստական տվյալներ:

Անձի ֆիզիկական և հոգեբանական անձեռնմխելիության և անձնական ազատության իրավունքները, մարդու այլ հիմնական իրավունքների հետ մեկտեղ, ԱՀ Սահմանադրությամբ ճանաչվում են անօտարելի և բարձրագույն արժեք, ուստի մարդու այդ հիմնական իրավունքների սահմանափակման իրավաչափության երաշխիքները կանոնակարգող իրավադրույթները մեկնաբանելիս անհրաժեշտ է հիմնվել մարդու իրավունքները հարգելու, մարդու իրավունքների սահմանափակման միջոցով հիմնական իրավունքը բովանդակագրվելու անթույլատրելիության կանոնների վրա: Հակառակ պարագայում անձի ազատության և անձնական անձեռնմխելիության սահմանադրական իրավունքի սահմանափակման իրավաչափության դատական երաշխիքը կլինի պատրանքային, իսկ հիմնական իրավունքն ուղղակի կբովանդակագրվի:

Կալանավորման պայմանների թվում հատուկ կարևորություն ունի անձի կողմից իրեն վերագրվող հանցագործությունը կատարած լինելու հիմնավոր կասկածը: Կասկածը կհամարվի հիմնավոր ենթադրյալ հանցագործության հետ կասկածվող անձի օբյեկտիվ կապը հաստատող որոշակի տեղեկությունների ու փաստերի առկայության դեպքում, ընդ որում՝ անհրաժեշտ է ունենալ նաև բավարար հիմքեր՝ եզրակացնելու, որ դեպքը, իրադարձությունը համընկնում են այն ենթադրյալ հանցանքին, որի կատարման մեջ անձը կասկածվում է:

Գերագույն դատարանն արձանագրում է, որ կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու միջնորդությունը քննելիս, դատարանն իրավասու չէ կանխորոշելու մեղքի հարցը, իրավական գնահատական տալու անձի մեղավորությանը կամ անմեղությանը, անմիջականորեն փաստելու անձի արարքում հանցակազմի առկայությունը կամ բացակայությունը: Ընդ որում, անձի նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելիս, պետք է հաստատվի հասարակության ընդհանուր շահի և անհատի հիմնարար իրավունքների միջև արդարացի հավասարակշռությունը, որը պետք է բխի անձի՝ ազատությունից զրկվելու հետ կապված կիրառվող միջոցի և հետապնդվող նպատակների միջև համամասնության ողջամիտ հարաբերակցության անհրաժեշտությունից: Կալանավորման առանցքային պայմաններից մեկի՝ հիմնավոր կասկածի առկայությունը պարզելու համար դատարանը պարտավոր է գնահատման ենթարկել մեղսագրվող արարքին անձի առնչությանը վերաբերող փաստական տվյալները: Վերոգրյալի համատեքստում,

Գերագույն դատարանը հարկ է համարում ընդգծել, որ անձի նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու մասին Առաջին ատյանի դատարանի դատական ակտի իրավաչափությունը ստուգելիս Վերաքննիչ դատարանը համապատասխան բողոքի պայմաններում նույնպես պետք է պատշաճ գնահատման ենթարկեր անձի կողմից իրեն մեղսագրվող հանցանքը կատարած լինելու հիմնավոր կասկածը: Ընդ որում, Վերաքննիչ դատարանը պետք է գնահատման ենթարկի բողոքաբերի կողմից ներկայացված նյութերը՝ ենթադրյալ հանցանքի հետ անձի օբյեկտիվ կապի առկայությունը պարզելու համար:

Մինչդեռ Առաջին ատյանի դատարանը, բավարարելով քննիչի միջնորդությունը և անդրադառնալով մեղադրյալի արարքում ԼՂՀ քրեական օրենսգրքի 111-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված արարք կատարելու համար իրեն մեղավոր չճանաչելու և նշված արարքում հիմնավոր կասկածի, այն է՝ հանցակազմի բացակայության խնդրին՝ հայտնել է հետևյալ դիրքորոշումը. «Մասնավորապես, միջնորդության քննությամբ ձեռք բերված հանգամանքների վերլուծությունը ցույց է տալիս, որ մեղադրյալն իր դրսևորած գործողություններով Բախշի Միրզոյանին պատճառել է առողջության ծանր վնաս, ինչը վկայում է վերջինիս մոտ հավանական դիտավորության առկայության մասին /օրինակ՝ դրա մասին կարող են վկայել հանցագործության գործիքները կամ միջոցները՝ հրազեն կամ այլ զենք գործադրելը, հարվածների քանակը, իրադրությունը, շարժառիթը/»: Չնայած վերաքննիչ բողոքում նշված փաստարկին՝ նշված պատճառաբանության անհիմն լինելու և դրանով մեղադրյալ Ա.Բալայանի անմեղության կանխավարկածը խախտելու մասին, Վերաքննիչ դատարանն իր որոշման մեջ չի անդրադարձել Առաջին ատյանի դատարանի նշված դիրքորոշմանը, դրանով իսկ թույլ տալով էական դատական սխալ:

Ասյն նյութի ուսումնասիրությունից երևում է, որ Առաջին ատյանի դատարանը 2019թ. հունվարի 15-ին քննության է առել մեղադրյալ Ա.Բալայանի նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու մասին քննիչի միջնորդությունը և նկատի ունենալով, որ քրեական գործով ձեռք բերված ապացույցները բավարար են մեղադրյալի նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու համար, հաշվի առնելով նրան վերագրվող արարքի բնույթն ու հանրության համար վտանգավորության աստիճանը, ինչպես նաև նրա անձը, գտել է, որ մեղադրյալ Ա.Բալայանը, գտնվելով ազատության մեջ, կարող է կատարել քրեական օրենքով չթույլատրված արարք, ուստի քննիչի միջնորդությունը համարել է հիմնավոր և բավարարման ենթակա: Առաջին ատյանի դատարանի որոշման ուսումնասիրությունից երևում է, որ դրանում բացակայում են հստակ հիմնավորումներ այն մասին, թե ինչու է դատարանը կարծում, որ քննիչի միջնորդությունը հիմնավոր է և մեղադրյալ Ա.Բալայանը, ազատության մեջ մնալով կարող է կատարել քրեական օրենքով չթույլատրված արարք:

Գերագույն դատարանն արձանագրում է, որ Առաջին ատյանի դատարանն անտեսել է այն իրավական պահանջը, որ ԼՂՀ քրեական դատավարության օրենսգրքի 146-րդ հոդվածում թվարկված մեղադրյալի հավանական գործողությունների մասին հետևությունները պետք է հիմնված լինեն նյութերից բխող ողջամիտ կասկածների կամ ենթադրությունների վրա, և կալանավորման կիրառման հիմքում բոլոր դեպքերում պետք է դրված լինեն փաստական տվյալները: Փաստորեն, Առաջին ատյանի դատարանն առանց համապատասխան հիմքերի առկայության, հետևություն է արել Ա.Բալայանի նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու միջնորդության հիմնավորված լինելու մասին և արդյունքում կայացրել անհիմն ու չպատճառաբանված որոշում, որն էլ օրինական ուժի մեջ է թողել Վերաքննիչ դատարանը: Միաժամանակ, մեղադրյալ Ա.Բալայանի կողմից

հրազենը կամովին հանձնած լինելու մասին վերաքննիչ բողոքի փաստարկի առնչությամբ Վերաքննիչ դատարանն արձանագրել է, որ զենքի կամովին հանձնման տակ հասկացվում է անձի կողմից զենքի հանձնումն անձի կամքով՝ անկախ շարժառիթից, ինչպես նաև զենքի կամ դրա գտնվելու վայրի մասին իշխանության մարմիններին հայտնելը՝ այն հետագայում ևս պահելու ռեալ հնարավորության պարագայում, իսկ քննչական գործողությունների ընթացքում, ինչպես նաև հանցագործության կատարումից հետո հանձնված զենքը կամովին հանձնում չի ենթադրում, ուստի, այս մասով ևս առկա է հանցագործություն կատարած լինելու հիմնավոր կասկած: Գերագույն դատարանը հարկ է համարում արձանագրել, որ Վերաքննիչ դատարանի նշված եզրահանգումը դատավարության այս փուլի համար հիմնավոր համարվել չի կարող և խախտում է անձի՝ ԱՀ Սահմանադրությամբ հռչակված անմեղության կանխավարկածի սկզբունքը, ուստի այս մասով բողոքաբերի պատճառաբանությունը ևս հիմնավոր է:

Գերագույն դատարանը փաստում է, որ Վերաքննիչ դատարանը, դատական ստուգման ենթարկելով և օրինական ուժի մեջ թողնելով Առաջին ատյանի դատարանի նշված որոշումը, թույլ է տվել ԼՂՀ քրեական դատավարության օրենսգրքի 7-րդ հոդվածի /օրինականության սկզբունք/, 299-րդ /որպես խափանման միջոց կալանքն ընտրելու կամ չընտրելու վերաբերյալ որոշման օրինականության և հիմնավորվածության դատական ստուգումը/ պահանջների խախտում, ինչը հանդիսանում է քրեադատավարական օրենքի էական խախտում և դատական ակտը բեկանելու բավարար հիմք:

Ամփոփելով վերոշարադրյալը, Գերագույն դատարանը հիմնավոր է համարում բողոքաբերի այն փաստարկները, որ Վերաքննիչ դատարանը դատական ակտ կայացնելիս թույլ է տվել ԼՂՀ քրեական օրենսգրքի 403-րդ հոդվածի պահանջների խախտում, ինչն իր բնույթով էական է, քանի որ ազդել է ճիշտ որոշում կայացնելու վրա, և համաձայն ԼՂՀ քրեական դատավարության օրենսգրքի 416-րդ, 424-րդ հոդվածների, հիմք է ստորադաս դատարանի որոշումը բեկանելու համար:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ սույն որոշմամբ մատնանշված խախտումները բավարար են Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու համար, Գերագույն դատարանն անհրաժեշտ չի համարում անդրադառնալ վճռաբեկ բողոքում նշված մյուս հիմքերին:

Ելնելով վերոգրյալներից և ղեկավարվելով ԼՂՀ քրեական դատավարության օրենսգրքի 436-րդ հոդվածի 2-րդ մասով, 439-րդ, 440-րդ հոդվածներով, Գերագույն դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Մեղադրյալ Ա.Բալայանի պաշտպան Գ.Մալխասյանի վճռաբեկ բողոքը բավարարել: ԱՀ ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2019թ. հունվարի 15-ի որոշումն օրինական ուժի մեջ թողնելու մասին ԱՀ վերաքննիչ դատարանի 2019թ. հունվարի 23-ի որոշումը բեկանել: Ա.Բալայանի նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու վերաբերյալ ԱՀ ոստիկանության Ասկերանի շրջանի քննչական խմբի քննիչ Ա.Շամիրյանի միջնորդությունը մերժել, Ա.Բալայանի նկատմամբ ընտրված խափանման միջոցը՝ կալանավորումը վերացնել և նրան անհապաղ ազատ արձակել դատական նիստերի դահլիճից:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում դատական նիստերի դահլիճում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

ՆԱԽԱԳԱՀՈՂ
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ

ստորագրությունը
ստորագրությունը
ստորագրությունը
ստորագրությունը
ստորագրությունը

Կ.ՂԱՐԱՅԱՆ
Գ.ԳՐԻԳՈՐՅԱՆ
Հ.ԱԲՐԱՀԱՄՅԱՆ
Հ.ԽԱԶԱՏՐՅԱՆ
Ի.ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱՐԱՆ

ԱՀ վերաքննիչ դատարանի որոշում Բաղաքացիական գործ ԸԻԴ/1573/02/16
Քաղաքացիական գործ ԸԻԴ/1573/02/16
Նախագահող դատավոր՝ Ն.Գրիգորյան
Դատավորներ՝ Լ.Ավանեսյան
Մ.Ավանեսյան

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀԱՆՈՒՆ ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ք.Ստեփանակերտ 05-ին մարտի 2019թ.

Արցախի Հանրապետության Գերագույն դատարանը (այսուհետ՝ Գերագույն դատարան)՝ վճռաբեկության կարգով.

նախագահությամբ՝ Ն.Նարիմանյանի,
մասնակցությամբ՝ դատավորներ՝ Հ.Աբրահամյանի,
Գ.Գրիգորյանի,
Ի.Կարապետյանի,
Կ.Ղարայանի,

գրավոր ընթացակարգով քննելով ըստ հայցի «Արցախբանկ» փակ բաժնետիրական ընկերության ընդդեմ Կարեն Վյաչեսլավի Հարությունյանի և Լիլիթ Ռաֆիկի Մկրտումյանի՝ գումար գանձելու և գրավադրված գույքի վրա բռնագանձում տարածելու պահանջի վերաբերյալ ԸԻԴ/1573/02/16 քաղաքացիական գործով Արցախի Հանրապետության վերաքննիչ դատարանի 2019 թվականի հունվարի 11-ի որոշման դեմ պարտապան Կարեն Հարությունյանի բերած վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. Գործի դատավարական նախապատմությունը

Արցախի Հանրապետության ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի (այսուհետ՝ Առաջին ատյանի դատարան) 2016 թվականի նոյեմբերի 07-ի վճռով «Արցախբանկ» փակ բաժնետիրական ընկերության հայցը՝ գումար բռնագանձելու և բռնագանձումը գրավադրված գույքի վրա տարածելու պահանջի մասին, բավարարվել է: Դատական ակտը չի բողոքարկվել և մտել է օրինական ուժի մեջ:

2018 թվականի հոկտեմբերի 18-ին ԸԻԴ/1573/02/16 քաղաքացիական գործով պահանջատեր «Արցախբանկ» փակ բաժնետիրական ընկերությունը (այսուհետ, նաև՝ Պահանջատեր) դիմել է Առաջին ատյանի դատարան՝ կատարողական թերթեր դուրս գրելու և դրանց հարկադիր կատարման ներկայացնելու բաց թողնված ժամկետը վերականգնելու խնդրանքով:

Առաջին ատյանի դատարանի 2018 թվականի դեկտեմբերի 05-ի որոշմամբ դիմումը՝ կատարողական թերթեր տրամադրելու մասով, բավարարվել է, իսկ դրանց կատարման ներկայացնելու բաց թողնված ժամկետը վերականգնելու մասով՝ մերժվել:

Նշված որոշման դեմ 2018 թվականի դեկտեմբերի 12-ին վերաքննիչ բողոք է ներկայացրել Պահանջատիրոջ ներկայացուցիչ Ս.Պողոսյանը:

Արցախի Հանրապետության վերաքննիչ դատարանի (այսուհետ, նաև՝ Վերաքննիչ դատարան) 2018 թվականի դեկտեմբերի 27-ի որոշմամբ վերաքննիչ բողոքն ընդունվել է վարույթ և նշանակվել դատական քննության:

Վերաքննիչ դատարանի 2019 թվականի հունվարի 11-ի որոշմամբ վերաքննիչ բողոքը բավարարվել է՝ Առաջին ատյանի դատարանի 2018 թվականի դեկտեմբերի 05-ի որոշումը մասնակիորեն բեկանվել և պահանջատիրոջ դիմումը բավարարվել է:

Նշված որոշման դեմ, փոստային ծառայության միջոցով, 2019 թվականի հունվարի 30-ին պարտապան Կարեն Հարությունյանը ներկայացրել է վճարեկ բողոք՝ Վերաքննիչ դատարանի դատական ակտը բեկանելու և նյութը Վերաքննիչ դատարան՝ նոր քննության ուղարկելու խնդրանքով:

Վճարեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

2. Վճարեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Սույն վճարեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում՝ ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը թույլ է տվել դատավարական իրավունքի նորմի խախտում: Մասնավորապես, Վերաքննիչ դատարանը խախտել է ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 241-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի պահանջը:

Ըստ բողոքաբերի՝ Վերաքննիչ դատարանի կողմից վարույթ ընդունված նյութի դատական քննության համար նշանակված նիստի վերաբերյալ ծանուցումն ինքը ստացել է այն նույն օրն ու ժամին, երբ նշանակված է եղել դատաքննությունը: Արդյունքում, դատաքննությունն անցել է առանց իր մասնակցության: Ի հիմնավորումն իր պնդման, բողոքաբերը ներկայացրել է Վերաքննիչ դատարանի կողմից իրեն ուղարկված ծանուցագիրը ստանալու պահը վկայող ապացույց՝ տրամադրված փոստային ծառայության աշխատակցի կողմից:

Վերոգրյալի հիման վրա բողոքաբերը խնդրել է բեկանել Վերաքննիչ դատարանի 2018 թվականի դեկտեմբերի 05-ի որոշումը և քաղաքացիական նյութն ուղարկել նույն դատարան՝ նոր քննության:

3. Վճարեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

1. Վերաքննիչ դատարանի 2018 թվականի դեկտեմբերի 27-ի՝ վերաքննիչ բողոքը վարույթ ընդունելու և դրա հիման վրա ԸԲԴ/1573/02/16 քաղաքացիական գործով Առաջին ատյանի դատարանի 2018 թվականի դեկտեմբերի 05-ի որոշումը 2019 թվականի հունվարի 08-ին ժամը՝ 10:30-ին վերանայելու մասին որոշումը պարտապաններ Կարեն Հարությունյանին և Լիլիթ Մկրտումյանին է ուղարկվել 2018 թվականի դեկտեմբերի 27-ին թիվ ԵԼ1277 գրությամբ:

2. 2019 թվականի հունվարի 08-ին ժամը՝ 10:37-ին սկսված և 15:39-ին ավարտված դատական նիստին պարտապանները չեն մասնակցել:

3. ԸԲԴ/1573/02/16 քաղաքացիական գործում առկա չեն ապացույցներ՝ պարտապանների կողմից 2019 թվականի հունվարի 08-ին նշանակված դատական նիստի վերաբերյալ Վերաքննիչ դատարանի ուղարկված ծանուցագրերը ստացած լինելու կամ այլ կերպ դատաքննության օրվա և ժամի մասին իրազեկված լինելու վերաբերյալ:

4. Վճարեկ բողոքին կից պարտապան Կարեն Հարությունյանը ներկայացրել է փոստատար Լ.Ասրիբաբայանի կողմից ստորագրված և

«Արցախփոստ» ՓԲ ընկերության Մարտունու մասնաճյուղի դրոշմակնիքով հաստատված տեղեկանք, որի համաձայն՝ Կարեն Հարությունյանի և Լիլիթ Մկրտումյանի անունով թիվ 938 և 939 պատվիրված նամակները ստացվել են 2019 թվականի հունվարի 08-ին և նույն օրը տրամադրվել հասցեատերերին:

5. Ըստ պարտապան Կարեն Հարությունյանի՝ Վերաքննիչ դատարանի ծանուցումը ստացել է 2019 թվականի հունվարի 08-ին ժամը՝ 15:00-ի սահմաններում:

4. Գերագույն դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները

Գերագույն դատարանն արձանագրում է, որ ներկայացված վճռաբեկ բողոքը վարույթ է ընդունվել Վերաքննիչ դատարանի կողմից առերևույթ այնպիսի դատական սխալ թույլ տրված լինելու հիմքով, որը կարող էր ազդել գործի ելքի վրա: Այս առնչությամբ Գերագույն դատարանն արձանագրում է հետևյալը.

ԱՀ Սահմանադրության 61-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների արդյունավետ դատական պաշտպանության իրավունք:

ԱՀ Սահմանադրության 63-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի անկախ և անաչառ դատարանի կողմից իր գործի արդարացի, հրապարակային և ողջամիտ ժամկետում քննության իրավունք:

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) 6-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ յուրաքանչյուր ոք, երբ որոշվում են նրա քաղաքացիական իրավունքները և պարտականությունները կամ նրան ներկայացրած ցանկացած քրեական մեղադրանքի առնչությամբ, ունի օրենքի հիման վրա ստեղծված անկախ ու անաչառ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք:

ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 6-րդ հոդվածի համաձայն՝ քաղաքացիական դատավարությունն իրականացվում է կողմերի մրցակցության և իրավահավասարության հիման վրա:

ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 23-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ գործին մասնակցող անձինք պետք է իրենց դատավարական իրավունքներից օգտվեն և իրենց դատավարական պարտականությունները կատարեն բարեխղճորեն:

ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 74-րդ հոդվածի համաձայն.

«1. Գործին մասնակցող անձինք դատական ծանուցագրերով տեղեկացվում են դատական նիստի կամ առանձին դատավարական գործողություններ կատարելու ժամանակի և վայրի մասին: Դատական ծանուցագրերով դատարան են կանչվում նաև վկաները, փորձագետները և թարգմանիչները:

2. Ծանուցագիրն ուղարկվում է պատվիրված նամակով՝ հանձնման մասին ծանուցմամբ կամ հաղորդագրության ձևակերպումն ապահովող կապի այլ միջոցների օգտագործմամբ կամ հանձնվում է ստացականով (այսուհետ՝ պատշաճ ձևով):

3. Ծանուցագիրն ուղարկվում է գործին մասնակցող անձի նշած հասցեով:»:

Գերագույն դատարանն արդեն իսկ իր կայացրած որոշումներում արձանագրել է, որ. «... դատական նիստի ժամանակի և վայրի մասին գործին մասնակցող անձինք կամ նրանց ներկայացուցիչները պատշաճ ծանուցված են համարվում այն դեպքում, երբ դատարանում հավաստի տեղեկություն է ստացվում դատական ծանուցագիրը հասցեատիրոջը հանձնվելու մասին: Գործին մասնակցող անձանց՝ դատական նիստի ժամանակի և վայրի, դատավարական այլ գործողությունների իրականացման մասին պատշաճ

ծանուցումը կողմերի դատական պաշտպանության իրավունքի, իրավահավասարության և մրցակցության սկզբունքների ապահովման կարևոր պայմանն է: Մարդու իրավունքների եվրոպական դատարանն իր նախադեպային իրավունքում արտահայտել է այն դիրքորոշումը, որ «հավասարության» սկզբունքը՝ կողմերի միջև «արդար հավասարակշռության» իմաստով պահանջում է, որպեսզի յուրաքանչյուր կողմ ունենա ողջամիտ հնարավորություն՝ ներկայացնելու իր գործն այնպիսի պայմաններում, որոնք նրան իր հակառակորդի նկատմամբ չեն դնի նվազ բարենպաստ վիճակում: Մրցակցային դատաքննության սկզբունքը ենթադրում է, որ յուրաքանչյուր կողմ պետք է ունենա գործում եղած կամ լրացուցիչ ներկայացված ապացույցների մասին տեղեկանալու և դրանց մասին մեկնաբանություններ ներկայացնելու հնարավորություն: Գերագույն դատարանը գտնում է, որ ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 74-րդ հոդվածով նախատեսված՝ դատական նիստի ժամանակի և վայրի մասին գործին մասնակցող անձանց տեղեկանալու իրավունքը և դատարանի՝ նրանց տեղեկացնելու պարտականությունն ուղղակիորեն կապված են ԱՀ Մահմանադրությամբ երաշխավորված օրենքի առջև բոլորի հավասարության համընդհանուր սկզբունքի և դրանից բխող ու ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով պաշտպանվող մրցակցության և կողմերի հավասարության սկզբունքների հետ: Նշված սկզբունքներն ամբողջ ծավալով կարող են իրականացվել միայն այն դեպքում, երբ գործին մասնակցող անձանցից յուրաքանչյուրին ընձեռված է դատական նիստին ներկա գտնվելու հնարավորություն:

Գերագույն դատարանն արձանագրում է, որ քաղաքացիական դատավարությունը կողմերի իրավահավասարության հիման վրա իրականացնելու սկզբունքի էությունն այն է, որ դատավարության բոլոր փուլերում կողմերն օժտված են իրենց իրավունքների և օրինական շահերի պաշտպանության միջոցներ օգտագործելու հավասար հնարավորություններով: Նշված սկզբունքը դրսևորվում է նաև դատարանին և գործին մասնակցող մյուս անձանց հասցեի փոփոխության վերաբերյալ գործին մասնակցող անձի կողմից ծանուցելով: Նման կերպ պաշտպանվում է ոչ միայն հասցեն փոխած անձի իրավունքը, այլև դատավարության մյուս մասնակիցների իրավունքները, քանի որ դատարանը, ծանուցագրերն ուղարկելով փոխված հասցեով, ըստ էության, ապահովում է գործի ողջամիտ ժամկետում քննությունը մի կողմից և դատավարության մասնակիցների՝ դատական նիստին ներկա գտնվելու հնարավորությունը մյուս կողմից:

ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 74-րդ հոդվածում ամրագրված իրավական նորմը ենթադրում է գործին մասնակցող անձանց՝ դատական նիստի ժամանակի և վայրի մասին իրազեկելու կապակցությամբ դատարանի ակտիվ գործողություններ, որոնք պետք է իրականացվեն միայն վկայակոչված հոդվածով նախատեսված միջոցների և եղանակների օգտագործմամբ: Ընդ որում, անկախ ծանուցման եղանակից, ծանուցումը պետք է լինի այնպիսին, որով հնարավոր է ապացուցել գործին մասնակցող անձին (անձանց) դատական նիստի մասին տեղեկացնելու փաստը:

Ըստ այդմ՝ Գերագույն դատարանը հարկ է համարում ընդգծել, որ ցանկացած դեպքում դատարանը պետք է կատարի դատավարության մասնակիցներին դատական նիստի ժամանակի և վայրի մասին իրազեկելուն ուղղված ակտիվ գործողություններ և պետք է ձեռնարկի օրենսդրությամբ նախատեսված՝ կոնկրետ իրավիճակում հնարավոր բոլոր ծանուցման միջոցները և եղանակները:

Գործող կանոնակարգումների համաձայն՝ այդ եղանակներն են.

1) ծանուցագիրը պատվիրված նամակով ուղարկելը, ընդ որում՝ հանձնման մասին ծանուցմամբ, կամ հաղորդագրության ձևակերպումն ապահովող կապի այլ միջոցների օգտագործմամբ,

2) ծանուցագիրը դատավարության մասնակցին ստացականով (առձեռն) հանձնելը:» (տես, օրինակ՝ ըստ հայցի Դիանա Վլադիմիրի Սարգսյանի ընդդեմ Լավրենտ Վլադիմիրի Սարգսյանի և Լիլիթ Գամոյի Ղուլյանի՝ ձեռքբերման վաղեմության ուժով սեփականության իրավունքը ճանաչելու պահանջի վերաբերյալ ԸԲԴ/1791/02/17 քաղաքացիական գործով Գերագույն դատարանի 2018 թվականի նոյեմբերի 23-ի որոշումը):

Նշվածների համատեքստում դիտարկելով Վերաքննիչ դատարանի ձեռնարկած միջոցները՝ պարտապաններ Կարեն Հարությունյանին և Լիլիթ Մկրտումյանին հարուցված վերաքննիչ վարույթով դատաքննության մասին իրազեկելու վերաբերյալ, Գերագույն դատարանն արձանագրում է հետևյալը.

Վերաքննիչ դատարանի 2018 թվականի դեկտեմբերի 27-ի՝ վերաքննիչ բողոքը վարույթ ընդունելու և դրա հիման վրա ԸԲԴ/1573/02/16 քաղաքացիական գործով Առաջին աստիճանի դատարանի 2018 թվականի դեկտեմբերի 05-ի որոշումը 2019 թվականի հունվարի 08-ին ժամը՝ 10:30-ին վերանայելու մասին որոշումը պարտապաններ Կարեն Հարությունյանին և Լիլիթ Մկրտումյանին է ուղարկվել 2018 թվականի դեկտեմբերի 27-ին՝ թիվ ԵԼ1277 գրությամբ:

2019 թվականի հունվարի 08-ին ժամը՝ 10:37-ին սկսված և 15:39-ին ավարտված դատական նիստին պարտապանները չեն մասնակցել:

ԸԲԴ/1573/02/16 քաղաքացիական գործում առկա չեն ապացույցներ՝ պարտապանների կողմից 2019 թվականի հունվարի 08-ին նշանակված դատական նիստի վերաբերյալ Վերաքննիչ դատարանի ուղարկած ծանուցագրերը ստացած լինելու կամ այլ կերպ դատաքննության օրվա և ժամի մասին իրազեկված լինելու վերաբերյալ: Այսինքն՝ Վերաքննիչ դատարանը դատական նիստն անց է կացրել առանց դատավարության բոլոր մասնակիցների պատշաճ ծանուցված լինելու վերաբերյալ ապացույց ունենալու:

Վճռաբեկ բողոքին կից պարտապան Կարեն Հարությունյանը ներկայացրել է փոստատար Լ.Արիբաբայանի կողմից ստորագրված և «Արցախփոստ» ՓԲ ընկերության Մարտունու մասնաճյուղի դրոշմակնիքով հաստատված տեղեկանք, որի համաձայն՝ Կարեն Հարությունյանի և Լիլիթ Մկրտումյանի անունով թիվ 938 և 939 պատվիրված նամակները ստացվել են 2019 թվականի հունվարի 08-ին և նույն օրը տրամադրվել հասցեատերերին: Ըստ պարտապան Կարեն Հարությունյանի՝ Վերաքննիչ դատարանի ծանուցումը ստացել է 2019 թվականի հունվարի 08-ին ժամը՝ 15:00-ի սահմաններում: Այսինքն, պարտապան Կարեն Հարությունյանը չի կարող համարվել դատական նիստի օրվա և ժամի վերաբերյալ պատշաճ ծանուցված անձ:

Նշվածների հաշվառմամբ, Գերագույն դատարանը գտնում է, որ Վերաքննիչ դատարանը չի պահպանել գործող օրենսդրությամբ դատավարության մասնակցին պատշաճ ծանուցելու սահմանված ընթացակարգը և այդ մասով թույլ է տվել դատավարական նորմի խախտում, ի չիք դարձնելով ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 217-րդ հոդվածով երաշխավորված վերադաս դատական աստիճանում լսված լինելու անձի իրավունքը: Վերջինս, իր հերթին, հանդիսանում է կայացված դատական ակտը բեկանելու անվերապահ հիմք, քանի որ ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 241-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետը սահմանել է, որ դատական ակտը. «... բոլոր դեպքերում ենթակա է բեկանման, եթե ... դատարանը գործը քննել է գործին մասնակցող անձանցից որևէ մեկի բացակայությամբ, որը պատշաճ ձևով չի տեղեկացվել նիստի ժամանակի և վայրի մասին...»:

Հիմք ընդունելով վերոգրյալը, Գերագույն դատարանը գտնում է, որ սույն վարույթի շրջանակներում անհրաժեշտ է կիրառել ԼՂՀ քաղաքացիական

դատավարության օրենսգրքի 253-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով սահմանված Գերագույն դատարանի՝ Վերաքննիչ ատյանի դատական ակտը բեկանելու և նյութը նոր քննության ուղարկելու, լիազորությունը:

5. Գերագույն դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները դատական ծախսերի բաշխման վերաբերյալ

ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 64-րդ հոդվածի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և փորձագետին, վկային կանչելու, ապացույցները դրանց գտնվելու վայրում գննելու, փաստաբանի խելամիտ վարձատրության և գործի քննության հետ կապված այլ գործողությունների համար վճարման ենթակա գումարներից:

ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 69-րդ հոդվածի 1-ին, 2-րդ, 3-րդ մասերի համաձայն՝ դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են բավարարված հայցապահանջների չափին համամասնորեն, գործին մասնակցող անձանց միջև դատական ծախսերի բաշխման մասին համաձայնության դեպքում դատարանը վճիռ է կայացնում դրան համապատասխան, վերաքննիչ կամ վճռաբեկ բողոք բերելու հետ կապված դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են նույն հոդվածի կանոններին համապատասխան:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ սույն վարույթի շրջանակներում օրենսդիրը պետական տուրքի վճարման պահանջ չի ամրագրել, Գերագույն դատարանը գտնում է, որ վճռաբեկ վարույթով դատական ծախսերի բաշխման հարցը պետք է համարել լուծված:

Ելնելով վերոգրյալներից և ղեկավարվելով ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 253-257-րդ հոդվածներով՝ Գերագույն դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Բեկանել Արցախի Հանրապետության վերաքննիչ դատարանի 2019 թվականի հունվարի 11-ի որոշումը և նյութն ուղարկել նույն դատարան՝ լրիվ ծավալով նոր քննության:

2. Վճռաբեկ վարույթով դատական ծախսերի բաշխման հարցը համարել լուծված:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

ՆԱԽԱԳԱՀՈՂ՝
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝

ստորագրությունը
ստորագրությունը
ստորագրությունը
ստորագրությունը
ստորագրությունը

Ն.ՆԱՐԻՄԱՆՅԱՆ
Հ.ԱԲՐԱՀԱՄՅԱՆ
Գ.ԳՐԻԳՈՐՅԱՆ
Ի.ԿԱՐԱՊԵՏՅԱՆ
Կ.ՂԱՐՍՅԱՆ

